

Գ. ՂԱՐԱՋՅԱՆ (Ս. Տ. ԱՐԿՈՄԵԴ)

**ՀԱՅ ԱՆԴՐԱՆԻԿ
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ**

(Հիմնական 45-ամյակի առթիվ)

ԼՐԱՏՍՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՅԱԿԵՆԻԳՅԱՆ

29.14/47.925/ 588

7 45

դառնալու 7.

1-ին դասի 1-ին հեղափոխական

Գ. ԴՆՐԱԶՅԱՆ (Ս. Տ. ԱՐԿՈՄԵԴ)

329.14(47.925)

Ն 46

301(47.925)(03)

+ 347.925.16

2022

**ՀԱՅ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԽՄԲԱԿԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ**

(Հիմնական հեռագրի տարած)

588

A II
80201



Հրատարակություն «Հանրակրթություն»

Թ Ի Ծ Լ Ի Ս

1927

Դրագիր № 1357. — Տիրած 2.000. — Պատվեր № 230.

Տպարան «Զարիա Ղասադկա»-յի Ս. Յուզուկիձեյի փող. № 4.

ՀԱՌԱՋԱԲԱՆ

1917 թվին Թիֆլիսի ս. դ. «Պայքար» թերթի համարներում լույս տեսավ իմ հիշողությունների առաջին մասը, վորը և առանձին գրքույկով հրատարակվեց հետևյալ 1918 թվին։ Այնտեղ յես ի միջի ալոց համառոտ տեղեկություններ եմ տալիս այն նարողնիական խմբակի մասին, վորը հանդես յեկավ անցյալ դարու 80-ական թվականների առաջին կեսում հեղափոխական գործունեության ձգտումներով։ Առաջիկա 1927 թվին լրանում ե այդ խմբակի լույս աշխարհ գալու 45-ամյակը։ Այդ առիթով յես հարկ համարեցի ձեռնարկելու մի առանձին աշխատության ավելի լրիվ և ամփոփ կերպով ծանոթացնելու ընթերցող հասարակության՝ մեր անցյալի այդ նշանավոր, բայց մոռացության և անհայտության մատնված, իրողության հետ։ Անհայտությունից լույս աշխարհ հանելով իմ առաջին հեղափոխական ընկերների գործը, յես ունեցել եմ կրկնակի նպատակ. առաջին՝ տալ նրանց գործի սկզբնավորման 45-ամյակի առիթով իմ հարգանքի ապացույցը նրանց անմոռանալի հիշատակին, յերկրորդ՝ ցույց տալ, վոր մեր յերկրի հեղափոխական—քաղաքական պատմության մեջ նրանք իրավունք ունին—ըստ իրենց գործի և արժանիքների—հիշատակված լինելու։

Այս աշխատությունը յես գրել եմ, հիմնվելով գլխավորապես իմ դիտողությունների և հիշողությունների վրա։ Հասկանալի ե, վոր պատմություն գրելու համար հիշողությունները բավական չեն։ հիշողությունները, կենսագրականները կարող են լինել անճիշտ, սխալ, նույն իսկ կեղծ,

շինծու, բանաստեղծական յերևակայության ծնունդ, ինչպես հաճախ այդ տեղի և ունեցել անցյալում, տեղի ունի և մեր որերում: Հարկավոր են, ուրեմն, պատմական փաստաթղթեր, նյութեր, կենդանի մարդկանց վկայություն և այլն: Պատմական այս տեղեկությունները խմբակի ենթա գործունեության մասին յես տալիս եմ վորպես նրա մի գործակից անդամը: Յես դրի եմ. անցուցել բոլորովին սառույց, որիեկտիվ տեղեկություններ, առանց վոր ե և գ ու ն ա վ ո Ր ու մ ն և Ր ի, տ ե ն դ ե ն ց ի ո գ մ ի տ ու մ ն և Ր ի, խորապես զիտակցելով ճշտության և որիեկտիվիզմի նշանակությունը պատմական գիտության համար: Մյուս կողմից 80-ական թվականներին սկզբում խմբակի այս կամ այն անդամի գործունեության հետ ծանոթ կենդանի մարդկանց վկայության պակասությունը, անշուշտ, չի զգացվի մեր որերում:

Բայց այս բոլորը գետ քիչ է:

Հարկավոր են պատմական գոկումենտներ. կան գոկումենտներ, բայց շատ չեն նրանք: Միք. Նալբանդյանի «Յերկրագործություն» արվելված աշխատության բնագրից բավականաչափ թվով որինակների անկեղալ արտատպությունը հեկտոգրամֆիայի վրա և տարածուժը յերիտասարգության գեմսկրատիկ շրջաններում, 1884 — 5 թ.թ. հայոց դպրոցների փակման առիթով ցարի կառավորության ուղղած խիստ լեզվով հրատարակած անկեղալ թուղցիկը, վորը ընթերցողը ամբողջապես գետեղված կգտնե ներկա աշխատության վերջում և վերջապես խմբակի մի անդամի (Սանդալի) 2 աշխատությունները, վորոնցից մեկը մի պատկեր և տաճկահայերի կյանքից «Վիշապ» անունով, գրված 1882 թվին և հրատարակված Թիֆլիսում 1884 թվին, իսկ մյուսը մի վեպ գյուղական կյանքից «Փոքրիկ Ասող» անունով, գրված 1885-6 թ. թ. և տպված Մոսկվայում 1892 թվին, վորոնց մեջ ընթերցողը կարող է գտնել նարոդնիկական, գեմսկրատական,

սոցյալիստական այնպիսի մտքեր, վորոնք կապում են հեղինակի և, կարելի և ասել, բնդհանուր առամար և նրա մոտ բնկերներէի համադմունքը, credo-ն— ահա այս ողորդ, կարծում ենք, բախարար հիմք կարող եր ծառայել այն բանի, վոր յես ձեռնամուխ լինելի մի աշխարհի աշխատութեան:

Ավելորդ չհամարեցի վերջում «Հավելվածի» մեջ առաջ բերել խմբակի անդամ Սանդալի վեպերից մի քանի քաղվածքներ, վորոնք ցույց են տալիս վորպես նմուշ հեղինակի և թե, կարելի և ասել, նրա բնկերների իդեոլոգյական հակումները:

Բնավ հուսալի բան չե սպասել, վոր մեր ազգային պատմութեան գրող արարացուները հետաքրքրվին իմանալու թե ի՞նչ և կատարվել հեռավոր կամ մոտ անցյալում հայ ժողովրդական կյանքի ստորյեբկրյա նկուղ-ն և բում, լույս աշխարհ հանելին այդ նկուղն և բում կատարված գործունեութեանը, լուսարաններն նրա նշանակութեանը, նրա տեղը մեր հասարակական—քաղաքական մտքի զարգացման պատմութեան մեջ: Բայց այդ բանի համար նրանք անբնդունակ են, տեսողութեան կարողութեանից զուրկ: Մեր կյանքը չե տվել, գերախտաբար, պատմական գիտութեան զենքերով զինված գրողներ: Հուսանք, վոր ներկա կյանքի մտքի և խոսքի զարգացման անկաշկանդ պայմաններում, յերևան կզան այդպիսի գրողներ: Նրանց հասցելին յես միայն մի ցանկութեան ունեմ ուղղելու. լինել պատմական ճշմարտութեան ջատագով, որչեկտիվիզմի ջերմ կողմնակից, գրել համաձայն գիտութեան պահանջների՝ յերբեք չմոռանալով բանվորական գեմոկրատայի պատմա-քաղաքական գիտակցութեան նորմալ զարգացման անհրաժեշտութեանը:

Գ. ՂԱՐԱԶՅԱՆ

(Ս. Տ. ԱՐԿՈՍԵԴ)

Nota bene. Չեմ ժողանում հայտնելու իմ շնորհակալությունը Հայաստանի հեղափոխության թանգարանի վարչության և ընկ. Խ. Սամվելյանին, վորոնք բարի յեղան ինձ ուղարկելու 1884 թ. դպրոցների փակման առիթով խմբակի հրատարակած անյեզալ թռուցիկի պատճենը և հաղորդելու թռուցիկի վերաբերյալ կազմած ժանդ. վարչության արձանագրության բովանդակությունը:

ՄՏՏԲԵՐԻ ԲԱՂԽՈՒՄՆ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ ԱՆՅՅԱԼ ԴԱՐՈՒ
70.80-ԱԿԱՆ Թ. Թ.

1.

Անցյալ դարու 70,80-ական թվականները կարելի է համարել վոչ թե մյայն հայերի, այլ և մեր հարեան վրացիների համար անցողական շրջան թե տնտեսական և թե իդեոլոգիական մարտի։ Յերկրի մեջ սկսում և գործառնության մեջ մտնել (функционировать) նաև՝ առևտրական կապիտալը, ապա նաև սահմանափակ շրջանակներում արգյունարերական կապիտալը։ Ղերիշխողը, սակայն, դեռ ևս առևտրա—վաշխառուական կապիտալն և այդ շրջանում, վորը իր շահագործող ավերիչ ձևերով ծայրահեղ աղքատացման և յենթարկում ժողովրդական մասսաներին։ Բաղաքները սկսում են փոխել իրենց արտաքին տեսքը, կերպարանափոխվել, բայց աճում են, առաջագիմում դեռ ևս դանդաղ։ Կես դար առաջ, յերբ դեռ յերկաթուղի չունեինք, Բաղուն թեև արտադրում եր վորոշ քանակությամբ նավթ, մեր յերկրի շատ մասերում— քաղաքներում (գյուղական շրջանների մասին խոսք չե կարող լինել), նույն իսկ Կովկասյան մայրաքաղաք Թիֆլիսում նավթ չեք գործածվում։ գործածական եր մոմը, հարուստ ընտանիքներում ստեարինի մոմը (стеариновая свеча), իսկ աղքատ ընտանիքներում հասարակ ճրագուի մոմը, վորը Թիֆլիսի շատ ընտանիքներում պատրաստում եին տնային ձևով սազարում ավելի թանկ չգնելու համար։ 50 տարի առաջ Թիֆլիսը և թե Բաղուն դեռ շատ վողորմելի քաղաքներ եին։ Նահապետական կյանքը և սովորություն-

ներք իրանց կնիքը խորապէս դրել եին ամեն բանի վրա: Մանր շարչիական և միջին առու.տուրք իր ստիական ձևերով, զառաֆությունը*) և արհեստագործությունը իր պրիմիտիվ գործիքներով և պրիմիւներով կազմում եին այն ժամանակվա քաղաքային տնտեսությունը: Համբարությունը և առևտրական մեղչանականությունը—ահա այն ժամանակվա քաղաքների հասարակական տնտեսութեան տիպիք ներկայացուցիչները: Գյուղական ազգաբնակչութեան մեջ թագավորում էր գերազանցապէս նատուրալ տնտեսությունը և նահապետականությունը իր հին ազաթներով և կենցաղով: Այնուամենայնիւմ հինը, նահապետականը սկսում է նահանջել նոր դարգացող արդյունաբերական, հասարակական ուշժերի առաջ, սեղի տալ դանդաղաբար, կամակորեն, բայց անխուսափելիորեն: Յերկիրը հետզհետե մտնում և հասարակական-արդյունաբերական ավելի ծափայուն, յեռուն հարաբերությունների շրջանը: 80-ական թվականներին արդեն նոր ճանապարհներ և յերկաթուղային դժեր անցնելուց հետո՝ մենք դիտում ենք Անդրկովկասի քաղաքների և քաղաքային տնտեսութեան արագ աճումը, առևտրական և արդյունաբերական կապիտալի ավելի մեծ թափով գործունեությունը քան նախորդ 70-ական թվականների շրջանում, յերբ յերկաթուղիներ չկային, հաղորդակցութեան միջոցները գժվար և անտանելի եին: Զառաֆները բոլորովին անհետանում են, հիմնովում են մի շարք բանկեր և այլ վարկային հաստատություններ: Անդրկովկասյան յերկաթուղային գիծը (Բաթումից Թիֆլիս—Բազու.) և Բազուն իր նալթային արդյունաբերութեամբ հանդիսանում են այնուհետե մեր յերկրի տնտեսական կյանքի դարկերակը: Կարիք կո միթե

*) Զառաֆները (սեզանավորներ) պարսպում եին դրամ մանրացնելու գործով: Նրանցից ամեն մեկը ուներ իր փոքրիկ խանութում զրամարկը և կատարում էր այն ժամանակ մի տեսակ բանկերի դեր: Զառաֆութեանն էլ արհեստ էր համարվում. զառաֆները ունեին իրենց համարքությունը և ուստաբային:

ասելու, վոր նոր անտեսական կարգերը, հասարակական— արտադրական նոր հարաբերութեանները իրենց հետ բերում են նոր խոսք, նոր լեզու, նոր գաղափարներ: Հասկանալի է այդ պատճառով, վոր հին և նոր անտեսական կարգերի մեջ անհրաժեշտորեն ծագած պայքարի հետ ծագում և զարգանում և հին և նոր մտքերի, գաղափարների պայքարը: Եվ այդ գաղափարական պայքարը 70,80-ական թվականներին արտահայտվում և ուժեղ թափով դիտավորապես մամուլի մեջ:

Մեր հասարակական զարգացման պատմութեան այդ շրջանում դիտավորապես յերկու գաղափարական հոսանք իրար հետ խիստ կերպով ընդհարվում են: Մեկը հնի, միջնադարյանի, նահապետականի, կղերական-ազգայնականի աշխարհայեցողութեան արտահայտիչն էր, վորը և հայտնի էր հետադեմ, խափարամիտ, պահպանողական-կղերական անունով, դա մ է դ վ ա կ ա ն հ ո ս ա ն ք ն էր, վորի որդանն էր «Մեղու Հայաստանի»-ն (խմբ. Պետրոս Սիմոնյան), իսկ 1884 թվից հետո «Նոր-Գործ» (խմբ. Սպ. Սպանդարյան): Մյուսը նորի ջերմ կողմնակից, նոր արդյունաբերական, առևտրական, արհեստագործական ույժերի զարգացման, լիբերալ-բուրժուազական աշխարհայեցողութեան պաշտպան, առաջադիմական— սեփոմատորական ուղղութեան հետևող հոսանքն էր, վորի որդանն էր «Մշակ»-ը (խմբ. Գր. Արծրունի): Սրանցից ամեն մեկը հենվելով ազգաբնակչութեան վորոշ ելեմենտների վրա՝ ձգտում էր իրենից հասարակական ույժ ներկայացնել: «Մեղու Հայաստանի» կղերական—պահպանողական հոսանքը հենվում էր հին, նահապետական անտեսական կարգերը կրող ազգաբնակչական ելեմենտների, հետադեմ ինտելիգենցիայի, հասարակութեան հոգևորական և աշխարհական կղերական խավերի վրա. մյուսը («մշակական» հոսանքը)—ազգային առաջադիմական զբոսակի տակ առևտրա-արդյունագործական (կապիտալիստական) նոր ույժ և

րի, լիբերալ և դեմոկրատական ինտելլիգենցիայի, ուսանողութեան և հոգևորականութեան «յուսափորված» տարրերի վրա:

Գաղափարական պայքարը խիստ և անողոր ևր. իհարկե այդ պայքարը տեղի ունեւ լեզալ մամուլի և մասամբ գրականութեան բնագավառներում: Հասկանալի է, վոր 70, 80-ական թվականների հայ հասարակութեան անգրագիտութեան տակօր շատ բարձր լինելով՝ թերթերի և գրքի բնթերցողների թիւն ել, գրա համաձայն, չափազանց սակավ եր: Գրագետ բնթերցողը իրեն շրջապատող ծանոթ և բարեկամ անգրագետներին իր հասկացողութեամբ և գիտութեամբ տեղեկութեաններ եր հաղորդում հակառակորդ բանականների դաժանած հայացքների, նրանց կռիւ եութեան մասին. սակայն այդ բանք մասսայական չեր դարձնում պայքարողների հասարակական ուժեր: Այն ժամանակվա պայմաններում պայքարը (գաղափարական, վորի աստաօր տնտեսականն եր) չեր կարող զանգվածային լինել: Բայց այն, ինչ վոր տեղի ունեւ անհատների և փոքրիկ խմբերի մեջ մեծ նշանակութեան եր ստանում արժեքների դնահատման տարակարծիքութեան, մտքերի շարժում առաջ բերելով մինչե այդ՝ մեր հասարակութեան ճահճային իրականութեան մեջ:

Յեթե խօսք ե լինում մեր յերկրի հայ, վրացի կամ այլ ժողովուրդների հասարակական կյանքի դարգացման, նրանց ներքին կյանքի մեջ տեղի ունեցած շարժման, պայքարի և այլ յերևույթների մասին, սխալ կլիներ նրանց ներկայացնել բոլորովին անջատ, անկախ մուսաստանից, ռուսական կյանքից, վորի ազդեցութեանը նրանցից յուրաքանչյուրի վրա և տնտեսական, և հասարակական—գրական և այլ բնագավառներում ահագին և յեղել: Ռուսաստանում տեղի ունեցած փոփոխութեանները, նյութական և բարոյական դարգացումը բնականօրեն անգրագարձել են—թեև հաճախ ավելի թույլ և դանդաղ կեր-

պով—մեր յերկրի հասարակական կյանքի վրա: Հիշենք Ռուսաստանի ճորտերի ազատագրութեան մեծ եպոխան, 60-ական թվականների ռեֆորմերի, 60-70 ական թվականների քաղաքական, հասարակական-գրական հոսանքները, փորձք փորձ չափով արձագանք են տվել նաև մեր յերկրի կյանքին: Ռուսական գրականութիւնը առանձնապես ազդեցութիւն է գործել մեր մամուլի և գրականութեան վրա:

Շատ մեծ է յեղել ռուսական կուլտուրայի և գրականութեան ազդեցութիւնը մեր յերիտասարդութեան, մասնավորապես ուսանողութեան վրա:

Եվ այդ վոչ թե միայն 70, 80-ական թվականների շրջանում, փորի մասին եւ այստեղ խոսքը, այլ միշտ՝ Ռուսաստանի մեր յերկրին տիրապետելու սկզբից մինչև մեր որերը:

Մեր յերկրի միջնակարգ դպրոցներում (ոեայ և կլասիկ դիմնագլաներում) և ապա Ռուսաստանի համալսարաններում մեր յերիտասարդ սերունդը ստանում եր իր կրթութիւնը: Այդ ուսանողութեան զգաստ և զգայուն մասը, բացի մասնագիտական կրթութեան ձեռք բերելը, բնականորեն հաղորդակից եր լինում ուսանողական շարժումներին, ազդվում եր ռուսական գրական և նույնիսկ քաղաքական հոսանքներից:

Մեր Անդրկովկասյան յերկրում Թիֆլիսը փորպես մեր քաղաքներից ամենամեծը և բազմամարզը: Փորպես ազմի-նիստրատիվ, մտավոր և գրական կենտրոնական քաղաք, յեղել է տասնյակ տարիների ընթացքում առաջին արձագանքողը ռուսական կյանքի յերևութիւնների:

Առանձնապես ուշադրութեան արժանի է Թիֆլիսի կյանքի անցյալ դարու 70-ական թվականների վերջնական և 80-ական թվականների սկզբնական շրջանը, փորը բեկման շրջան կարելի է համարել հնից դեպի նոր կյանքը, պահպանողական-նահապետական կյանքից դեպի նոր, բուրժուական քաղաքակրթական կյանքը:

Այդ ժամանակներում բարձրագույն և միջնակարգ դպրոցների հայ ուսանող յերիտասարդության մեջ նկատելի էր այնպիսի վառ հետաքրքրություն դեպի հասարակական—գրական կյանքը, վերաբերման չէ յեզեղ անցյալում: Ինքնակրթության, ինքնագործաշնան տենչը, ձգտումը առանձնապես աչքի էր բնկնում:

Այդ ժամանակ հատկապես յերկու նշանափոք դեպք ազդեցիկ նշանակություն ունեցան հայ ուսանող և փոշ ուսանող յերիտասարդ սերունդի համար. այդ ազդակներն էին 1878 թվի ուսու—տաճկական պատերազմը, փոքր, ինչպես ամեն մի պատերազմ, կյանքի մեջ վերսշահափով փոփոխություններ, մաքերի շարժում առաջ բերեց և 1881 թվի մարտի 1-ի Ալեքսանդր Ս-ի սպանության պատմական դեպքը, փոքր ցնցում առաջ բերեց յերիտասարդ ինտելիգենտ խմբերի, առափկապես ուսանողական սերունդի մրտաշին աշխարհում: Հասկանալի է, ուրեմն, փոք այդ դեպքերը, հայ մամուլի և գրականության մեջ տեղի ունեցած պայքարը, «Հայկական հարց»-ի լուծման համար առաջացած հոսանքը, Բեռլինի 1878 թ. դաշնագրի 61-րդ շարաքաատիկ հոդվածը և վերջապես այն ժամանակ ընդհանրապես տիրող դպրոցական սխալաստիկան, կատիկական բխացնող կրթական սխալներ՝ ուժեղ խթան էին հանգիստանում այն բանի, փոք ուսանողությունը սթափվեր, նրա մեջ մաքի շարժում առաջ դար դեպի նորը, դեպի լուսավոր ներկան և ես առափկ ապագան: Չէ փոք պատանեկական, յերիտասարդական հոսակին ընդհանրապես հատուկ և հետաքրքրություն, հափշտակություն, փոքերություն նորով, դեղեցկով, թարմ ու առողջ գաղափարներով, ապախմտական ցնորքներով և այլն: Եվ ահա այդ ժամանակաշրջանում հոգերանորեն կրկնվում է մեր յերիտասարդության կյանքի մեջ այն, ինչ փոք անցյալում ուրիշ ժողովուրդների յերիտասարդ սերունդի մեջ տեղի է ունեցել:

Թիֆլիսեցի և Թիֆլիս այցելող և ժամանակավորապես աշխույժ ապրող դասաւանդի համալսարանական հայ ուսանողներէց մի հայտնի մասը և թե Թիֆլիսի միջնակարգ դպրոցների վերջին դասարանների փոշնամիտ, մատածող, զարգացած աշակերտութիւնը կարիք են դրում փոխադարձ շփումն ունենալու, կապեր հաստատելու միմյանց հետ. նրանք սկսում են դպրոցական պատերից դուրս իրանց ծնողներից և ուսուցիչներից ծածուկ և նրանց կամքի հակառակ՝ ժողովներ, հովարայթներ կազմակերպել զրեթե բացառապէս ինքնադարգացման, ինքնակրթութեան նպատակներ հետապնդելով։^{*)} 70-ական թվականների վերջերում և 80-ական թվականների սկզբներում հիմնվեցին այդ նպատակով Թիֆլիսի զանազան թաղամասերում — Կուկիայում, Վանքի թաղում, Մոդնու թաղում, Անշխաւատի, Ս. Գևորգի, Խարփուխի և այլ թաղերում ուսանողական-աշակերտական խմբեր և ժողովներ, փրանց մասնակցում էին գիմնադպանների և հայաց սեմինարիայի բարձր դասարանների հայ աշակերտները և Ռուսաստանի զանազան համալսարանների ուսանողները։

Այդ ժողովները, ուր ներկա էին լինում փոշ ավելի քան 10—15 հոգի, տեղի ունեին ա՛նլ և գալ գիշեր ժամանակները։ Այդ խմբերին մոտ կանգնած էին ուսանողներից մի քանիսը, փորոնցից հիշենք Սիմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյան յեղբայրներին (Վաղարշապատցի, Մուկիայի ուսանողներ)^{**)}, ուսանող Ներսեսյան, Թամարա Աղամյան — Պետերբուրգի համալսարանի ուսանողուհի, փորը ամենքին սիրելի հասարակական գործունեու-

*) Այստեղ և հետևյալ մի քանի էջերում յետ ստիպմամբ, եւմ վերհիշել մի քանի քաներ, փոր ընթերցողը կգտնե իմ «Անցյալի հիշողութեաններից» զըրբույթի մեջ։

**) Նրանցից տասներ, փորուն ինձ հայտնի է, դեռ կենդանի և (մի քանի տարից հետո զարձալ սեռակցիտներ)։ Իսկ մյուսը — Սրապիոնը դեռ ուսանող ժամանակ փոխանակեց. մի անհատական դժբաղդս դեպքի տարթով հա իրեն նեւեց եղբայրանի լինը և ինկատեց։

թյան հակումներով համակրելի որիորդ եր^{*)}։ աշակերտներից հիշենք Սանդալին (Աղեքսանդր Պետրոսյան), ներսեսյան դպրոցի բարձր դասարանից արձակված աշակերտ իր ըմբոստության պատճառով։ Քր. Միքայելյան, վորր թիֆլիսի Աղեքսանդրյան ուսուցչական ինստիտուտի աշակերտ եր. Աբրահամ Դաստակյան, վորր վերջը դարձավ Բաղվի բուրժուազյայի աչքի ընկնող հասարակական գործիչ։ Թվենք ժողովների անդամների մի քանիսի անունները ևս. Իսահակ Զուրարյան (հետագայում բժիշկ), Լևոն Ղորղանյան, Գալուստ Տեր-Մկրտչյան, Նիկոլ Մատինյան, Գևորգ Ղարաչյան, Գրիգոր Աղաբաբյան (պատանի, վերջը ինժեներ), Յեզոր Թադևոսյան, Հակոբ Թադևոսյան, Հակոբ Քոչարյան, Հովհ. Յուսուֆյան, Արշակ Ադամյան, Ադամալյան և ուրիշներ։

Հիշված անձերից մի հայտնի ժողովրդականություն վաշելում եին ուսանողուհի Թամարա Ադամյանը (հետոսիկ. Ներսեսյան), Սանդալը (Աղ. Պետրոսյան), Աբրահամ Դաստակյանը, ուսանող Տեր-Գրիգորյանները։

Այդ անլեզալ խմբերը ու ժողովները աշակերտներն ու ուսանողներն եին ինքնաբերաբար կազմակերպել։ Քուսք չկա, վոր դպրոցների խափարամիտ, սեակցիոներ վարչությունները և դաստիարակ-ուսուցիչները խիստ հետամուտ եին այն աշակերտներին, վորոնք հաճախում եին «անլեզալ» ժողովները։ Յես չեմ մոռանում թե ինչպես Ներսեսյան դպրոցի հետադեմ, անպետք ուսուցչությունը (ի բաց առյալ 1, 2-ի) գլխավորությամբ հայտնի պահպանողական-կղերական «Մեղու Հայաստան» ի խմբագիր Պետրոս Սիմոնյանի, վորը դպրոցի տեսուչն եր այդ ժամանակ, հալածում եր դպրոցի այն աշակերտներին, վորոնց վերաբերմամբ կասկածում եին կամ դիտեին վոր մասնակցում են հիշյալ գաղտնի ժողովներին և խմբերին։ Նրանք ու-

*) Հետո նա ամուսնացավ համախելի ուսանող Ներսեսյանի հետ, վորը բարակացավից մեռավ։ Իսկ Թամարան դրանից հետո յերկուր չապրեց։

ներին, իհարկե, իրանց լրտեսական ազննութեան աշակերտներին: *)

Ժողովներում տեղի եին ունենում այս կամ հոգվածի, զրքի կամ բեֆերատի ընթերցում, զրույցներ զրական և գիտական զանազան թեմաների մասին և ապա մտքերի փոխանակություն և վիճարարանություններ: Հայ պատանի, յերիտասարդ սերունդին այդ ժամանակ հետաքրքրում և զբաղեցնում էին առավելապես ուսւ հայտնի լիբերալ և բազիկալ զրոյները— Դորբուլուբով, Պիսարև, Շչեգրին, Տուրգենև, նույն իսկ Բեկինսկի, Չերնիշևսկի և այլն: Ըշմարիտ և, յերբեմն բարձր փիլիսոփայական թեմաներից եին սկսում, բայց շատերի համար անմարսելի էին նրանք. այդ պատճառով այդ ուղղությամբ դժվարամարս մտային մարզանքները թողնում էին և ձեռնարկում ավելի պարզ և մատչելի թեմաներին: Թեև այդ ժողովները անկազմակերպ և անսխառն էին և շատ բան չէին տալիս, այնուամենայնիվ այն ժամանակ, յերբ դպրոցներում տիրում էր հնավանդ, բթացնող սխառնմբ, այդ ժողովների պարսպմունքները համեմատաբար մեծ ոգտակարություն էին ներկայացնում յերիտասարդ սերունդի մտավոր զարգացման և առաջադիմության աեսակետից: Այդ խմբերն ու ժողովները մի ուրիշ նշանակություն ևս ունեին. նրանք զարգացնում էին յերիտասարդ սերունդի մեջ ընկերական, հասարակական ձգտումներ, հասարակական գործունեության հակումներ և այլն: Նրանք դպրոցական կրթական սխառնմի և ուղղության բոլորովին տարբեր ուղղություն

*) Յես դպրոցի թռչակագրոներից էի, ստանում էի ամսական 7 ասուրի: Չնայելով վոր յես ինձ զգուշ էի պահում, այնուամենայնիվ տեսուչ Պետրոս Սիմոնյանը կասկած ունենալով իմ մասնակցության մասին զազանի խմբերին, մի քանի անգամ ինձ կանչել և իրեն մտա և զգուշացրել այդ առիթով թռչակից զրկելու. կամ դպրոցից արձակելու ադառնայիքների տակ: Բայց յես վոչ զրկվեցի թռչակից և վոչ էլ արձակվեցի, թերևս այն պատճառով. վոր իրեն, Պետրոս Սիմոնյանի ագանդած առարկաներից (ընդհ. պատմություն և այլն) լավ առօրեղ աշակերտներից էի և թե այնպիսի ուսուցիչների պաշտպանությունն էի վայելում, ինչպես էին Ստ. Պալասանյանը, Դեմոք Բարխուդարյանը և փորք ինչ հետո Ծեքեռցի:

և ձգտումներ եին ներշնչում ուսանող սերունդի մեջ, բացում նրա առաջ ավելի լայն մտավոր հորիզոններ: Վոչ մի հեղափոխական կամ քաղաքական նպատակ չունեին նրանք. սակայն, յեթև կուղեք, այդ «անկեղալ», ծնողների և դպրոցների վարչությունների հակողությունից ազատ ժողովները և հավաքությունները՝ հեղափոխականացնում էին նրանց մասնակցող, հաճախորդ պատանիների ուղեղները: Իրողությունը այս է, վոր այդ խմբերին և ժողովներին մասնակցողներից շատերը ապագայում դարձան ավելի կամ պակաս աչքի բնկնող հասարակական գործիչներ, իսկ նրանցից մի քանիսը նույն իսկ հայտնի քաղաքական-հեղափոխական գործիչներ: Ինչպես արդեն հիշեցի, այս յերիտասարդ ուսանողությունը գտնվում էր առավելապես ուռւ լիրերալ և ուղիկալ դրական հոսանքների ազդեցության տակ. նրան ավելի կամ պակաս շարժով փոքերում էին ժողովրդի բարեկեցության, առաջադիմության, կուլտուրայի վերաբերյալ խնդիրները: «Ընդհանրության շահեր», ահա այն սիրելի խոսքը, վոր կյանք ժողովները հաճախող ամեն մի պատանուց, յերիտասարդից. դա այն ժամանակվա առաջադեմ-ուղիկալ յերիտասարդության լոզունգն էր: Ամեն կասկածից դուրս է, վորք բացի ուռւական կուլտուրայի, մտքի, գրականության ազդեցություններից, հայ ազգատիկ կյանքի մեջ տեղի ունեցած յերևույթները, վերայիշյալ «մեղուական», «մշակական» հոսանքների լրացրական բանավիճակները և այլն պակաս չեին գրավում մեր այդ ուսանող սերունդի ուշադրությունը: Կարող եմ ասել, վոր բացի հազվադեպ բացառություններից ամենքն էլ «մշակական» ուղղության էին պատկանում: Կային նրանց մեջ այնպիսիները, վորոնք ավելի ռադիկալ, ավելի ձախ էին քան Արժրուշյան «Մշակի»-ի ուղղությունը: Կային նաև Նալբանդյանին համակրող, նրա «սոցյալիզմին» հարող անհատներ: Իսկ հայերենին շտիրապետող երևմենաները (գլխավորապես Թիֆ-

10208
A 80201

լիսեցիք) գերագանցապես ուստական գրական—հասարակական կյանքի ազդեցութեան տակ եին դառնում:


Բալկանյան թերակղզու ժողովուրդների, առավելապես Բուլղարիայի ազատագրութեան վերաբերյալ անդեկությունները, «թուրքական սարսափները» Բալկաններում, տաճկահայ ժողովուրդի մարտիրոսագրությունը և այլն վուշ թե միայն Թիֆլիսի, այլ և գաղառական հայ ազգաբնակչության ուսանող և վուշ ուսանող յերիտասարդութեան մարերն եին ցնցում:

Նոր եր վերջացել ուստ-տաճկական սրատերազմը. գաղթականական մեծ հոսանք եր ստեղծվել այդ ժամանակ Տաճկաստանից դեպի Կովկաս: Բեռլինի գաշնադրի 61-րդ հոդվածը, Տաճկաստանում յեվրոպական դիպլոմատիայի հայկականական ռեֆորմներ մտցնելու խոստումները հափշտակել եին հայ ինտելլիգենցիային և ուսանողութեան:

«Ազգասիրական» մի ուժեղ հոսանք եր սկսվել այդ ժամանակ հայ իրականութեան մեջ, Վորքան ավելի հեռու երկր գնում յերկրի մայրաքաղաք Թիֆլիսից և մեծ քաղաքներից, այնքան ավելի այդ «ազգասիրութեանը» շովինիզմի ալլանդակ ձևերն եր ընդունում:

Հիշյալ յերիտասարդ ուսանողական խմբերի մեջնականելի եր թե «ազգասիրութեան» և թե ուստական նարողնիկական հոսանքների ազդեցութեանը: Ուսանողներից փոմանց համար սիրելի եր Տուրգենևի «Накануне»-ն իր լնասարով հերոսով, իսկ մյուսների համար՝ ավելի սիրելի եին «Рудин»-ը, «Отцы и дети» հերոսները: Վերջիններս ընդհանուր առմամբ ավելի հակված եին դեպի ուստական նարողնիկութեանը:

Մի փորրաթիվ խումբ անջատվելով այդ ինքնակրթական ժողովներից և խմբերից՝ հարկ համարեց հանդես գալու նաև հասարակական գործունեութեան ասպարեզ: Դա արդեն սկիզբն եր դադանի, «անրեզալ» գործունեութեան, փորը գեռ հեռու եր ճեղափոխական լինելուց. փոստիկա-



նությունը անփութ և անուշադիր եր, բնավ վաշինչ չեր տեսնում. նա մտափում եր այն ժամանակ մեր յերկրում: Այդ խմբի ուսանող և վաշ ուսանող յերիտասարդները իրենց կենտրոնական ուշադրությունը սկսեցին դարձնել վանեցի, մշեցի և այլ տաճկահայ մշակների այն հոծ մասսաների վրա, վորոնք Թյուրքիայի քաղաքական և սոցյալական դաժան պայմանների շնորհիվ գաղթելին Թիֆլիս և Կովկասի այլ քաղաքները իրենց որական պարենը հայթայթելու՝ բեռնակրությամբ և աշխատանքի այլ և այլ տանջող ձևերով:

Այդ դեմոկրատ յերիտասարդները մոտենում էին մշակներին, ծանոթանում նրանց հետ, հարատե կապեր հաստատում նրանցից ավելի ընդունակների և խելացիների հետ, կազմակերպում էին նրանցից խմբեր և ժողովներ, պրոպագանդ մղում և կրթում նրանց ազատագրության գաղափարներով: Մշակների հետ կապ և հարաբերություններ պահպանելու համար քաղաքի 2-3 տեղում կետեր եին հաստատված (Հավլարարում, Մ. Գեորգի և Մոզնու թաղերում), վորոնցից կենտրոնականը և գլխավորը համարվում եր Հովնանյան գպրոցը իր աչքի ընկնող 2 խելացի տաճկահայ ծառաներով: Այդ ծառաների միջոցով, կարելի և ասել նրանց նախաձեռնությամբ՝ գպրոցի շենքում յերբեմն տեղի եին ունենում գիշերները—շատ մեծ զգուշությամբ—մշակների գաղտնի ժողովներ:

Գաղափարական յերիտասարդ սերունդի ներկայացուցիչների վրա ազդասիրական և նարոդնիկական հոսանքները գրեթե հավասարապես ազդեցություն եին դործում: Այդ տարրեր հոսանքների իդեոլոգիաների մի տեսակ խառնվածք եր նկատվում նրանց մեջ. նրանք կարծես բնագդարար հաշտեցնում եին այդ հոսանքների տարրեր աշխարհայեցողությունները:

1881-82 թ. թ. այդ դործունեությունը մշակների մեջ մի առանձին յեռանդով տարվեց: Այդ դործունեու-

362

Թյան նպատակն եր առաջ քաշել մշակներից՝ ավելի ընդունակներին և արժնացնել նրանց գիտակցությունը. նրանց միջոցով այլ մշակների խմբեր և ժողովներ կազմակերպել, միջոցներ ձեռք առնել իրանց անտանելի, տանջալից կյանքը ավելի կամ պակաս գիտակցած խմբերից ցանկացողներին Յերկիր ուղարկել, այնտեղ իրանց հայրենակիցների մեջ ներշնչել այն դադափարները, վորոնք նրանք յուրացրել էին իրենց յերկրից դուրսը՝ Կովկասում—Քիֆլիսում, Յերիտասարդ գեմոկրատ գործիչների հասկացողությամբ մշակների ևն՝ գործունեությունը մի տեսակ «սոցիալիզմ» եր:

Սակայն այդ գործիչ խմբի անդամներից մի քանիսին չեր բավարարում այդ «մշակային գեմոկրատիզմը», «սոցիալիզմը», յեթե կարելի և այսպես ասել. նրանք տրամադիր էին ավելի ընդարձակել իրանց գործունեությունը, անուշադիր չթողնել նաև տեղական ժողովրդական մասսաներին: Այդ «գեմոկրատիզմը» նրանք կամենում էին կիրառել ինչպես մշակների, այնպես և արհեստավորական և առավելապես գյուղացիական շրջաններում. նրանք աչքաթող չեին ուզում անել աշակերտ-ուսանողներին, վորոնցից նրանք սպասում էին ապագա հասարակական գործիչներ: Այդ մտադրությամբ տեղի ունեցան մի քանի ժողովներ. այստեղ արտահայտված մտքերի ընդհարումը, պայքարը պարզեց, վոր շատերը այն կարծիքի էին, վոր պետք է գրեթե բացառապես զբաղվել «հայկական խնդրով», տանկահայ ժողովրդի ազատագրության վերաբերյալ խնդիրներով, մի խոսքով այն բոլորով, ինչով այսպես կամ այնպես կարող էին նպաստել տանկահայ մասսաների «ազգային» գիտակցության զարգացման գործին: Միուսները (ավելի սակավաթիվ) պնդում էին, վոր չեր կարելի զոհել ամեն ինչ «տանկահայի խնդրին». «Կովկասում ունենք «մեր ցավերը», ասում էին նրանք. կա մեզանում վոչ սակավ տանջվող, տառապող գյուղացիություն, անգրա-

ղետ, հետամնաց, անկուտուրական արհեստավորություն-
վերջապես ուսանողություն, յերիտասարդ ինտելլիգենցյա,
փորոնք ապագա գործունեության համար կարիք ունեն
փորոշ ուղղությամբ նախապատրաստության, ինքնագոր-
ծության» և այլն: Հիշյալ ժողովներում տեղի ունեցած
մտքերի այս պայքարը փոշ մի հետևանքի չհանգավ. բա-
ցարձակ «ազգասերները» մնացին հաստատ իրենց կար-
ծիքի մեջ. իսկ դեմոկրատները չհաշտվելով նրանց հետ
պետք և գծերն իրենց գործունեության նոր ուղիները:
Պետք և ասել, փոր այդ դեմոկրատներից փոմանք բնավ
չեին ներքում «ազգասիրությունը» («ազգասիրություն»
հայկական հարցի խմաստով). սակայն նրանք մեր յերկրի
հասարակական, կուլտուրական գործունեության անհրա-
ժեշտությունը խորապես գիտակցում եին, մինչդեռ ուրիշ-
ները («նացիոնալիստները») դրեթե բոլորովին մոռացու-
թյան եին տալիս այդ:

Ահա այս միջավայրում, մտքերի խմորման և բաղի-
ման այս պայմաններում սկիզբն առավ այն փոքրաթիվ
խմբակը, փորը գերազանցապես ռուսական նարոդնիկու-
թյան ազդեցության տակ՝ հանդես յեկավ 1882-3 թվա-
կաններին նոր ուղղությամբ հասարակական գործունեու-
թյան ասպարեզ և փորի մասին հարկ եմ համարում տալ
այստեղ ավելի լրիվ տեղեկություններ բան յես այդ արեւ
եմ 1917 թվին Թիֆլիսի ս. գ. «Պայքար» թերթի եջե-
րում:

II.

ՀԱՅ ԱՆԳՐԱՆԻԿ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾԱԳՈՒՄԸ, ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ:

Ինչպե՞ն ասացի խումբը հանդես յեկավ 1882-3 թ.թ.
փորպես կուլտուր-կրթական, հասարակական և կավեա-
ցենք հեղ ափոխական գործող խումբ. թեև նրա ան-

դամներից վոմանք դեռ ևս զրանից առաջ անցյալում աշխատել եին արդեն հասարակական գործունեության այս կասայն ասպարեզում: Վորքան ինձ հայանի ե, այդ խմբի հանդես գալուց առաջ չե յեղել մեր մեջ հեղափոխական վորեւ մի այլ կազմակերպություն, մի այլ խմբակ, վոր ձգտեր գործունեության հեղափոխական մեթոդ կիրառելու, ճանաչեր անլեզալ, ընդհատակյա, հեղափոխական գործունեության անհրաժեշտությունը: Մեր հասարակական-քաղաքական պատմության համար ունի նշանակություն հենց այն հանգամանքը, վոր մեզանում զա առաջին անգամն ե, վոր մի խմբակ, կանգնում ե հեղափոխական տեսակետի վրա և իր գործունեությունը վարում ե վորոշ սահմաններում, թեև մանկական յերերուն քայլերով հեղափոխական ուղղությամբ: Սա ե գլխավորը, վոր ուշագրավ ե այն անհատների և խմբակցությունների համար, վորոնք վորպես հեղափոխական՝ ընդունում են, վոր հասարակական որդանիդմի զարգացման պատմությունը չե ընթացել յերբեք առանց հեղափոխությունների, բռնի հեղաշրջումների, վոր հասարակական կյանքի վորոշ մոմենտներին հեղափոխությունը պատմականորեն անհրաժեշտ ե և անխուսափելի, ինչպես անխուսափելի և անհրաժեշտ են կյանքի խաղաղ զարգացման ետապները: Մեկը առանց մյուսի չե կարող լինել, մեկը մյուսից քղխում ե անհրաժեշտաբար:

Այդ խմբակի հեղափոխական գործունեության փաստեր և զուկումենտներ կան ասպարեզում. նրանց մասին մենք կհիշենք փոքր ինչ հետո:

Յերկրորդ նշանակալից բանը, վոր պետք ե հիշատակել այստեղ, այդ այն ե, վոր խմբակի անդամները զտրնվում եին ռուսական լեզալ և անլեզալ նարոդնիկության ազդեցության տակ: Սոցիալիզմ—նարոդնիկական մտքով սոցիալիզմ հայ հասարակության մեջ! Դա բոլորովին նոր բան եր մեր իրականության մեջ: Յեթե հարցնելիք խմբի անդամներից մեկին կամ մյուսին թե նա կողմնակից ե

արդյոք գյուղացիները անհատական, մասնավոր սեփական-
նութեան, նա ձեզ կասեր, վոր կողմնակից ե վոր անհա-
տական, այլ կողքիկտիվ աշխատանքի, համայնական հողա-
տիրութեան. յեթե հարցնեիր. աշխատավորը-բանվոր, ար-
հեստավոր, մշակ թե գյուղացի ե այլն շահագործման յեն-
թակա լինելով ազայից, հարուստից, բուրժուայից, կալ-
վածատերից, համարում ե նո արդյոք այդ յերևույթը
նորմալ, հասարակական արդար մի յերևույթ. նա կըողո-
քեր ե կասեր ձեզ, վոր ամեն աշխատավոր ե ամեն մարդ
իր հալալ աշխատանքի, հալալ քրտինքի տերը պետք ե
լինի: Մի տեսակ գյուղացիական, ազրարային սոցիալիզմ,
մի տեսակ արհեստավորական (մանր-բուրժուազական)
սոցյալիզմ, լուսպեն-պրոլետարական սոցիալիզմ *) — ահա
թե խմբակի ուղղութեան ինչպիսի բնորոշում կարելի ե
տալ մոտավորապես:

Խմբի անդամները վորոշ չափով ծանոթ եին Չերնի-
շևսկու, Դորբոյուզովի, Նույն իսկ Միրտովի (Լավրովի) ե
այլ քաղաքական—հասարակական գործիչների ե գրողների
հետ: Նույն իսկ բակուճիզմը տեղ եր դասել նրանց աշխար-
հայեցողութեան մեջ. տերրորը ընդհանրապես ե անարխիս-
տական տերրորը մասնավորապես ընդունելի միջոց եր հա-
մարվում: **)

Մտքերի ռազիկալիզմը խմբակի անդամների հատկա-
նիչներից մեկն եր: Նրանց մասձեւակերպը ուղղված եր
դեպի — ուստական նարոդնիկութեան թեորիան: Նրանք
անուամեն այս կամ այն քայլը նրա հետևողութեամբ ե
նմանողութեամբ: Բայց ասել թե նրանք ամենքը ե նրան-

*) Խմբակի անդամներից մեկը գտնում եր, վոր Մունգուկյանի Պեպե-
քնածին սոցիալիստ եր:

**) Սանգալը, վորը խմբի աչքի ընկնող անդամներից եր, այն կարծիքն
եր հայտնում, վոր մոգովրդական գործի շտեյ տեսակետից ամեն տեսակ միջոց
գործադրելի ե. այսպես որինակ յեկեղեցիների թանգարտեր իրերը—վոսկին ա-
ւարձաթ կողոպտելը, երսի յենթաբկելը բնավ աննպատակահարմար միջոց չեր
կարելի համարել:

ցից մեկը կամ միուսը լիովին և հարադատութեամբ ընդ-
գրկելէին ուսական նարոդնիական սոցյալիզմը իր բազ-
մաթիւ գունավորումներով և տենդենցներով, կարելի չե-
փաստը միայն այն է, վոր խմբակը իր տեսական և գործ-
նական քայլերը փորձում եր անել այդ ուղղութեամբ:
Բայց յեթե հայ նարոդնիկութիւնը տեսականապես չգոր-
գացաւ, չհասունացաւ մինչ հեղափոխական նարոդնիկա-
կան սոցյալիզմը, խմբակի գործունեութիւնը անսխառն,
անհետևողական և անկազմակերպ թերաւ մնաց և այդ
պատճառով չթողեց հասարակութեան, ժողովրդական մաս-
սաների կյանքի մեջ խոր ակոսներ — դրա պատճառները
շատ շատ են, վորոնց բացատրութիւնը պետք է վորոնել
կալիստայան և մասնավորապէս հայ հասարակական կյան-
քի զարգացման առանձնահատուկ պայմաններում:

Յերբ մի կազմակերպութիւն, մի խումբ հանդես և
գալիս հասարակական կամ քաղաքական ասպարեզում
գործելու հովակնութեամբ, այդ դեպքում բնականաբար
հարց և առաջ գալիս նրա ծրագրի, գործունեութեան ուղ-
ղութեան և այն ժողովրդական խավերի մասին, վորոնց
մեջ նա վճռել է վարել իր աշխատանքները: Յես արդեն
գրել եմ, վոր խմբակը «իր գործունեութեան մանկական
առաջին քայլերում վորոշ քաղաքական ծրագիր, սխառ-
նատիկ, համաչափ գործունեութիւն, կազմակերպչական
սերտ միութիւն չե ունեցել և այդպիսի պահանջներ անել
նրանից այն ժամանակվա քաղաքական և տնտեսական
պայմաններում կարելի չե»: «Ժողովրդական լայն խավերի
շահերին ծառայել, գործել արհեստավորների շրջաններում,
գյուղերը գնալ և գլխավորապէս գյուղացիական շարքե-
րում կենտրոնացնել կուլտուրական, հասարակական գոր-
ծունեութիւնը — ահա ընդհանուր առմամբ այն հիմնական
տենդենցիան, վորին հետամուտ եին հայ նարոդնիկները»:*)

*) Տես իմ «Սոցյալի հիւղութիւնները» աշխատութիւնը, Թիֆլիս
1918 թ. հիշ 24.

Խմբակը հանդես չեկաւ «նարոդնիկական» կամ վորեն այլ անվան տակ

կարողանում եին արդյոք նրանք գործնականում, կյանքի մեջ իրականացնել իրենց գաղափարական ձգտումները:

Այո, կարողանում եին, բայց շատ համեստ, նեղ սահմաններում, ինչպես չափազանց համեստ եին իրենց ուշաթերքը. նրանք անհատներ եին առանց ունենալու հենարան ժողովրդական մասսաների մեջ, համակրություն և աջակցություն հասարակական տարրեր խավերի կողմից: Իսկ կարող եին անել «փոքրիկ աստղերը»**) համապարփած անապատում թեկուզ նրանք վառ ու պայծառ լինեին. շատ չնչին բան, ճառագայթի անգոր, աղոտ լույս միայն թանձրը խավարի մեջ, վորը այնուամենայնիվ «լույս» եր գիշերային խորին մթության մեջ: Չնայելով իր թույլ, համեստ ուշաթերքին, այնուամենայնիվ համակր այն ժամանակվա վոչ թե միայն դաժան փոստիկանական—քաղաքական, այլ և հասարակական դաժան ռիակցիոն պայմաններում մանկան շարժվելու յերկշոտ քայլերով՝ անում եր հնարավորության սահմաններում վոր և և բան, փորձեր եր անում այս-այնտեղ համաձայն իր գաղափարների և ձգտումների՝ գործնական աշխատանք վարելու:

Հիշենք այստեղ այդ գործունեություն մի բանի կողմերը, մի բանի կատարած աշխատանքները:

Խմբի կենտրոնատեղն եր Թիֆլիս քաղաքը. նրա այս կամ այն անդամը գավառներն եր գնում վորեւ պաշտոնով կամ գործով: Նրանք, վորոնք մնում եին Թիֆլիսում կամ ապրում վորեւ գավառական քաղաքում՝ աշխատում եին կազմակերպել աշակերտական—ուսանողական խմբեր և ժողովներ, կապ հաստատել արհեստավորների հետ և գործել նրանց շրջաններում, տեղական և տաճկահայ

Հարցը անվան մեջ չե, իհարկե. գործող անհատներին, խմբերին կարելի և միայն հանաչել նրանց գործունեության յեղանակով, ուղղութեամբ, տեղեկացությամբ: Այս բանի վրա հիմնվելով յես պնդումեմ, վոր հիշյալ խումբը նարոկ-նիկոկան եր ուսուսկան նարոկնիկության նմանողութեամբ:

**) «Փոքրիկ աստղ» խմբակի անգամ Սանդայի վեպի անունն և:

մշակներ խմբել իրանց շուրջը, գեթ փոքր շափով հաղորդել նրանց իրենց մարդկային, բնկերական դժոխային կադուխթյան նկարագիրը, սերշնչել նրանց մեջ հույս, վոր ժամանակին նրանց գրությունը կբարեփոխվի. այս կամ այն հասարակական նյութի մասին պատահական դասախոսություններ կարդալ կամ գրույցներ կաղմակերպել ինտելլիգենտական, ուսանողական ավելի բազմամարդ ժողովներում և այլ և այլն*) Գյուղում պաշտոն վարող կամ ժամանակավորապես այցելող ընկերը ջանում եր մոտենալ գյուղական աշխատավոր խավերին, մասնակցել գյուղական ժողովներին և հավաքույթներին, վարել ըստ ամենայնի ոգտակար կուլտուր-կրթական, հասարակական աշխատանք, պայքար մղել գյուղի կուլակների և այլ «ցեղերի» դեմ և այդ պայքարի անհրաժեշտությունը հասկանալի դարձնել շահագործվողներին, տարածել գյուղական համայնքներում գիրք և թերթ և այլն:

Մեր հայ գրողներից և գործիչներից խմբակի անդամները իրենց սիրելի և ամենամոտ համարում եին Միքայել Նալբանդյանին: Թիֆլիսի ընկերներին հաջողվեց Մ. Նալբանդյանի «Յերկրագործություն» հայտնի աշխատությունը, վորը արգելված իր մեզանում, հեկտոգրաֆիայի վրա անլեզալ լույս ընծայել 1884 թվին, իսկ հաջորդ 1885 թվի սկզբում դեսոդոտ Ալեքսանդր III-ի կառավարության կողմից մեր հարյուրավոր յերկսեռ գաղտնիների բարբարոսաբար փակման սուրթով խիստ լեզվով զրկված մի անլեզալ տաղգիր թռուցիկ, վորը թե թիֆլիսում և թե գավառներում բավական քանակությամբ տարածվեց: Ընթերցողը կգտնե այդ թռուցիկը ամբողջապես զետեղված ներկա աշխատության եջերում: յես նրա մասին իր տեղում կտամ հարկավոր տեղեկություններ, ինչպես և մի քանի կոմմենտարյաներ: Իսկ Նալբանդյանի «Յերկրագոր-

*) Թիֆլիսի ընկերների մեջ վարպետ այդ ուղղությամբ գործող՝ հայտնի էր աստվեյապես Քր. Միքայելյանը:

ծություն» բրոշյուրի հրատարակման պարագաների մասին կարևոր եմ համարում մի քանի խոսք ասել այստեղ:

Ընկերների մեջ, վորոնց համար, ինչպես ասացի, սիրելի հեղինակ եր Միք. Նալբանդյանը, միտք հղացաւ արտատպել նրա հիշյալ արգելված աշխատութիւնը զոնե հեկտոգրաֆիայի վրա վորքան որինակ հնարավոր եր և վորոշ կոնտինգենտ ընթերցողներին ծանոթացնել նրա բովանդակութեան հետ: Մոսկովայի Պետրովսկայա Ակադեմիայի ուսանող Աղամալյանի հանձնարարութեամբ Թիֆլիսի Արհեստավորաց զպրոցի աշակերտներ—Միքայել Հովհաննիսյանը և Ալեքս. Ծատուրյանը (առաջինը մեր գրող «Նար-Դոս»-ն ե, իսկ յերկրորդը հանգուցյալ բանաստեղծ Ծատուրյանը) արտագրում են «Յերկրագործութիւնը», վորից հետո տպագրվում և հեկտոգրաֆիայի վրա այդ աշխատութիւնից հարկավոր քանակութեամբ որինակներ:*) Խմբակի անդամները տարածում են այնուհետեւ այդ գիրքը ուսանողական, յերիտասարդ ինտելիգենտական շրջաններում Թիֆլիսում և թե զավանեսբում:

Ինչպես տեսնում ե ընթերցողը բացի բանավոր անլեզալ գործունեութիւնից, խմբակը անլեզալ հրատարակութիւններ ձեռնարկելու վորձեր ել և արել, մի աշխատանք, վորը 80-ական թվականների սկզբում, հասկանալի պատճառներով, չափազանց դժվար և պատասխանատու գործ պետք եր համարել: 1884 թվի վերջերին և 1885

*) Այս տեղեկութիւնը ինձ վերջերս հաղորդեց «Նար-Դոս»-ը. Ինձ հայանի և հաստատապես, վոր այդ պատվերը յեղել և Քր. Միքայելյանի կողմից ուսանող Աղամալյանին, վորը Արհեստավորաց զպրոցի հիշյալ աշակերտների աջակցութեամբ (արտագրութիւն) բրոշյուրը տպագրելու գործին տեխնիկական ծառայութիւնն և մատուցել: Յեւ ծանոթ չեմ յեղել ուսանող Աղամալյանի հետ. յեւ մյայն անաշուտին Աղամալյան ազգանունով գիմնազայի մի աշակերտի, վորը մասնակցում եր Թիֆլիսի աշակերտական-ուսանողական կրթութիւններին, այդ Աղամալյանն և արդոյշ 1884 թվին «ուսանող Աղամալյանը» թե ուրիշ, հաստատ վորջինչ չեմ կարող ասել:

Թվի սկզբին (2 անգամ) Գանձակից, վորտեղ արդեն 2-րդ տարին ուսուցչական պաշտոն էի վարում, յեկա Թիֆլիս (իմ ծննդավայր քաղաքը), վորտեղ տեսնվելով Քրիստափորի (Միքայելյան) հետ*), վերջրի նրանից մի քանի որինակ նախնադրանի բրոշյուրից և մեծ քանակությամբ հիշյալ թուղթիկի որինակներից և տարա Գանձակ։ Թուղթիկների մի մասը և բրոշյուրից մի քանի որինակը տարածեցի Գանձակում և շրջականներում, ուղարկեցի նաև Գետաշեն դուղը Սանդալին (խմբակի անդամ), վորը այդ ժամանակ հիշյալ դուղի դպրոցում պաշտոնավարում էր վորպես ուսուցիչ։ Իսկ մյուս մասը ուղարկեցի Բագու Սմբատ Սարգիսբեկյանին (Շամախեցի), վորի հետ մի քանի ժամանակից ի վեր կապ եինք հաստատել։

Քանի վոր Սանդալը և տղերիս գրողը խմբակի անդամներ եինք և մեզ յերկուսիս վիճակվել էր խմբի գոյության որով աշխատելու Գանձակի շրջանում, յես ինձ թույլ եմ տալիս մեր վարած աշխատանքի մասին մի քանի ստույգ տեղեկություններ տալու, վորպեսզի ընթերցողը կարողանա մեր աշխատանքի որինակով մոտավոր գաղափար կազմել ընդհանրապես խմբակի վարած աշխատանքի տեսակի և ընույթի մասին։

Այդ տեղեկությունները յես տալիս եմ նկարագրական ձևով, հիմնվելով հիշողությանս վրա։

1883—4 ուսումնական տարվա սկզբից յես հրավիրվեցի ուսուցչական պաշտոնով Գանձակի հայոց յերկսեռ դպրոցների համար։

Անկախ այն բանից թե հասարակական մատչելիության հատկանիշը վոր աստիճանի է արտահայտվում գործող անհատի անձնավորության մեջ, գործի շահը թելադրում էր խմբակի անդամներին և պահանջում նրանցից

*) Նա այն ժամանակ ուղրում էր Սարգիսի նամերներում, Գորցոփառ փող. Արծրունու բարձրագույնից էլից ընդարձակ, մի շնոր, վորը այժմ էլ հյուրանոց է։

մատչելիութիւնն և մերձեցում ժողովրդական մասսաներին: Դպրոցական պարապմունքներէից դուրս յես շարունակ առիթներ եի վորոնում ծանոթանալու և կապեր հաստատելու հասարակութեան զանազան դեմոկրատական ելեմենտների ծառայողների, արհեստավորական, մանր առևտրական, ինտելլիգենտական խմբերի և աշակերտ—ուսանող յերիտասարդութեան հետ:

Այն ժամանակները հայ ուսուցիչը մեծ հարգանք և դիրք եր վայելում քաղաքի և մանավանդ գյուղական հասարակութեաններէ մեջ: Գանձակը մանր առևտրական, արհեստավորական, մանր արդյունաբերական մի քաղաք եր *), նահապետական սովորութիւններով. այդպէս ել նա քնաց աննշան տարբերութեամբ մինչև վերջ: Գանձակում և թե Կովկասի այլ քաղաքներում մեր այժմյան հասկացողութեամբ բանավորութիւն բոլորովին գոյութիւն չուներ այն ժամանակ: Նոր-նոր եր կազմակերպվում Գանձակի յերկաթուղային կայարանը, վորը մոտ 3 վերստ հեռու ե գտնվում քաղաքից: Տասնյակ տարիներ անցնելուց հետո միայն (1903-4-5 թ.թ.) սոցիալիստական պրոպագանդ մղվում եր գրեթե բացառապէս յերկաթուղային կայարանի ծառայողների և բանվորների մեջ: Յեթե նույն իսկ 80-ական թվականների սկզբում արդյունադործական բանվորութիւն ել գոյութիւն ունենար Գանձակում կամ Կովկասյան այլ քաղաքներում, ինչպէս այդ ժամանակ մասնավորապէս գոյութիւն ուներ արդեն Բաղվում, մեր մոտեցումը պրոլետարյատին չեր լինի սոցիալիտական—մարքսիստական, քանի վոր այն ժամանակվա յերիտասարդ ինտելլիգենտներից և վոչ մեկը, հասկանալի պատճառներով, դեռ ևս մարքսիստ-սոցիալիստ չեր և չեր կարող լինել: Այդ մոտեցումը կարող եր լինել այն

*) Յեթե չընաշվենք այդեգործութեանը, գինեգործութեանը, գինու առուտուրը, վորը այն ժամանակից սկսեց բաժանականաշարի գործանալ Գանձակում և գերմանական գողութիւն Յելենենգործում:

ժամանակ «ազգասիրական» կամ նարոդնիկական և կամ ընդհանրապես կուլտուրական, դեմոկրատական ուղղությամբ, նայելով հասարակական հակումներով այս կամ այն յերիտասարդ ինտելլիգենտ գործիչի մեջ վոր ուղղությունն եր գերազանցապես շեշտված:

1883 թվի աշունքից ինձ հաջողվեց կազմակերպել Գանձակում ուսանողական — աշակերտական խառը ժողովներ: Քաղաքում կային մի քանի համալսարանական ուսանողներ (Բանանցեցի Արամ Յեպիսկոպոսյան և ուրիշներ), վորոնք հիվանդության կամ այլ պատճառով թողել էին ժամանակավորապես համալսարանական պարապմունքները և ապրում էին իրենց ծննդավայր յերկրում: Դրանցից և տեղական գիմնազիայի բարձր դասարանցի (7, 8 դասարաններից) աշակերտներից եին կազմված հիշյալ ուսանողական ժողովները: *)

Հետևյալ տարին դպրոցների փակումից հետո այդ ժողովները դադարեցրին իրենց գոյությունը:

*) Այդ ուսանողական անլիզալ ժողովների մասին կա նույնպես հիշատակություն Հակոբ Հակոբյանի «Կենսագրական»-ի մեջ. տես էջ 28, Թիֆլիս, 1923 թ. հրատ. Անդրկ. Յերկր. Կամ.-ի:

Առիթից ոգավում եմ հայտնելու, վոր այդ ժողովները տեղի ունեին վոշ թե Էութուն հինգ թվի ակադեմիական մյուս կիսամյակից», ինչպես ասված է այնտեղ, այլ 1883-4 ուսումնական տարվա ընթացքում: Այդ խմբի և ժողովների կազմակերպողը և հիմնադիրը յեղել և քաջ առաջ եւս առդերիս գրողը, մինչդեռ այդ մասին վոշ մի խոսք: Ինձ շատ լավ հայտնի է թե ով և մասնակցելով ինչ և գրել և կարդացել այդ ժողովներում. և յերբ բանաստեղծ Հ. Հակոբյանը գրում է, վոր ինքը խմբի անդամ է յեղել, մասնակցել և ժողովներին և նույն խի խումբը հանձնարարել և նրան գրել «Հողային հարցը Տանկահայտատանում» թեմայով մի բեֆերատ և վոր նա այդ բեֆերատը կարդացել է ժողովում, ապա յես այդ գեպում ինձ հարկադրված եմ զգում հայտարարելու, վոր Հակ. Հակոբյանը վոշ իմ խմբի անդամ է յեղել, վոշ մասնակցել իմ կազմակերպած ժողովներին և վոշ ել թե այն ժամանակվա պայմաններում նրան — չափազանց անդարդացած 14-15 տարեկան մի աշակերտի — հանձնարարված լինել մի տխուր թեմայի մասին բեֆերատ գրելու, ինչպիսին և «Հողային հարցը Տանկահայտատանում»...

Վերջին ժամանակները նկատելի է մի վերին աստիճանի տեղի յերևոյթ. մարդիկ տանց քաշվելու գրում են անցյալի մասին տխուր շինծու, անհեթեթ, հրեշտյան բաներ, վորոնք միանգամայն անպիտան և անպիտան են գործում անցյալին լավ ծանոթ ընթերցողների վրա:

1884-5 ուսումնական տարին ցարական կառավարութիւնը բարբարոսաբար փակեց դպրոցները: Յետ, վոր ականատես եի Գանձակում այդ բարբարոսական ակտին, իմ յիշողութիւնից մինչև այժմ չե դուրս գալիս այն ցրնցող տեսարանը, վոր նա առաջ բերեց դպրոցներում նրանց փակման մոմենտին: Ռուս դահիճ «մանկավարժները» (ինչպես Գանձակի շրջանի ժողովրդական դպրոցների տեսուչ Որլովն եր և նրա հետ ուրիշները) ուղեկցությամբ վոստիկանության (վոստիկանապետը իր սվիրտայով) և զինվորների, ներս խուժելով դպրոցական շենքերը խիստ հրաման արձակեցին զաղարեցնել պարսպմունքները և անմիջապես ցրվել: մեծ հուզմունք և շփոթ բարձրացավ լաց ու շիւան ցրվող աշակերտ-աշակերտուհիների մեջ, արտասովում, հեծկլտում եին վարժուհիներն ու ուսուցիչները...

Շատ շուտով այդ ցնցող զեալից հետո Թիֆլիս մեկնեցի, ուր և ստացա Քրիստ. Միքայելյանից մեծ քանակությամբ անլեզալ տպված այն թուղցիկներից, վորի մասին վերե հիշվեց:

Սանդալը Գետաշենումն եր ալդ ժամանակ. մենք հաճախ տեսնվում եինք միմիանց հետ. յես եի այցելության գնում նրա մօտ Գետաշեն, նա եր զայլո հաճախ քաղաք ինձ մօտ զանազան առիթներով: Վորպես խմբի անդամներ շատ անգամ խորհրդակցում եինք այս կամ այն հարցի, մեր այս կամ այն անելիքի մասին և ապա հաղորդում մեր յեզրակացութիւնները Թիֆլիսի ընկերներին:

Ճշմարիտը խոստովանել — դպրոցների փակման ցնցող տպավորության տակ, յես սաստիկ ճնշված եի, հոգեկան ծանր, արտակարգ դրության մեջ եի գտնվում. այն ատիճան զրգոված եի, վոր խիստ զայրույթի, վրեժխնդրության մի տեսակ զգացմունք մղում եր ինձ արտասովոր մի գործ կատարելու, տերրորի յենթարկելու, սպանելու ցարի կառավարության լակեյներից, անմիջական մեղավորներից մեկին-թեկուզ հենց շրջանի ժողովրդ. դպրոցների

տեսուչ Որլովին, վոստիկանապետին, վորոնք զինված թիկ-
նապահներով, զինվորներով ներս խուժելով ավազակների
պես բռնի, զենքի ույժով փակեցին դարոցները, հենց թե-
կուզ Յանովսկուհ-Կովկասի դարոցների հոգաբարձուին,
վորը թիֆլիսումն եր ապրում այդ ժամանակ:

Այդ իմ միտքը հաղորդեցի Սանդալին. նա հավանու-
թյուն տվեց իմ մտադրված տերրորիստական ակտին. չե-
վոր տերրորիստական տրամադրությամբ յերիտասարդներ
եինք: Բայց ինչպես անել, ինչպես խոսքից դործի անցնել
— ահա այն հարցը, վոր պետք եր վճռել: Յես իսկի չեի
ուզում, վոր անհատական բնույթ կրեր այդ ծանր, պա-
տասխանատու քայլը. իմ ցանկությունն եր, նախ՝ այդ
բանը կատարել հասարակական վորեւ խմբի կամ ավելի
շուտ մեր հեղափոխական խմբակի անունից և կատարողը
լինելի յես. և յերկրորդ՝ կազմակերպված դուրս գալ անհա-
ջողության չհանդիպելու և անմեղ գոհեր չտալու համար:

Հարցը բազմակողմանի քննելուց հետո, համոզվեցինք,
վոր խմբակը, մենք — այն առտիճանի անդոր եինք, անպատ-
րաստ, վոր նույնիսկ այդ աննշան տերրորը ի վիճակի
չեինք ի կատար ածելու, թեև պետք ե ասել, վոր նման
տերրորիստական մի ակտ այն ժամանակվա պայմաննե-
րում ահագին նշանակություն կարող եր ունենալ, նա
ուռաջ կրերեր մեծ, ցնցող տպավորություն հասարակու-
թյան և կառավարության շրջաններում: Այդպիսով մեր,
ավելի ուղիղն ասել իմ — անհատապես տերրոր կատարելու
մտադրությունը մնաց միայն ցանկություն, խոսք, վորի
իրագործման համար պակասումեին անհրաժեշտ պայման-
ներ, յեթե կուզեք, հեղափոխական խլիցախություն, հեղա-
փոխական վճռականություն: Այդ միտքը թողնելուց հետո
կառավարության բարերարության քաղաքականության հա-
կադգելու լավագույն միջոց պետք եր համարել դադարել,
անկեղալ դարոցներ կազմակերպելու: Այդ մտքով ձեռնարկ-
վեց փորձեր անել. ինձ հաջողվեց բոլորովին ինքնաբերա-

բար փակված որիորդաց դպրոցի բարձր դասարանների աշակերտուհիներին հավաքել և նրանց հետ զազանի, անլեզու դպրոցական պարապմունքները շարունակել առանց վորեն վճարի և վարձատրության։ Այդ անլեզու դպրոցը պահվում էր այրի տիկին Յելենա Բալուդյանի բնակարանում։ Թեև այդ բանը հայտնի էր աշակերտուհիների ծնողներին, քաղաքացիներից վոմանց, թերևս նույն իսկ վոստիկանության, այնուամենայնիվ վոչ մի անակնկալ դեպք այդ ձեռնարկության առիթով, վոչ մի վորձանք տեղի չունեցավ, յերևի այն պատճառով, վոր ամենքն էլ այնպես էին համոզված, վոր յես մասնավոր դատեր տալու պատրվակի տակ եմ կազմակերպել այդ պարապմունքները։ Իրոք հենց սկզբից յես խիստ պատվիրել էի աշակերտուհիներին զազանիք պահել, վոչ վորին չասել իսկ այն դեպքում, յերբ այդ անկարելի էր, հետաքրքրվողներին հավաստիացնել, վոր նրանք մասնավոր դատեր են առնում ինձնից և զրա համար ինձ վճարում են։

Այդ պարապմունքների պատճառով, վորոնք սաստիկ հոգնեցուցիչ էին, յես ժամանակավորապես զազարեցրել էի ուսանողական հավաքութենները, թեև բարձր դասարանների աշակերտներից մի քանիսը հավաքվում էին յերբեմն Տեր-Միքայելյան յեղբայրների մոտ (Տ-րդ դասարանի աշակերտներ), վորոնց հետ միևնույն բնակարանում ապրում էի և ինքս։

Այդ ժամանակներն էր, վոր յես կարողացա կարճ միջոցով զնալ Բագու։ Նոր էր յերկաթուղին անցել Թիֆլիսից Բագու, յերկաթուղին սկսել էր արդեն բերել գյուղական շրջաններից բանվորական խմբեր։ Նավթային գանազան ֆիրմաներ արդեն սկսել էին նավթ արտադրել, բայց դեռ ևս քիչ քանակությամբ, վիչկանների թիվը շատ սակավ էր, արդյունաբերական կապիտալը չէր մտել դեռ ևս իր լիակատար դերի մեջ։ Բալախանին, Սարունչին և այլ հանքատեղերը վողորմելի տեսք ունեին այդ ժամանակ։

Պատահականություն, անփույթություն, անուշադրություն ամեն տեղ և ամեն բանում, կատարյալ անարխիա արդյունադործության մեջ— ահա ինչ եր այդ ժամանակ ամեն քայլափոխին աչքդ զարնում: Դա կապիտալի զարգացման այն շրջանն էր, փորին հատուկ են արդյունադործության, շահադործության ալլանդակ ձևեր, անպատասխանատու, սանձարձակ դործողություններ: Յերբ ինձ առիթ յեղավ 15 տարուց հետո (1898-1899 թ.թ.) յերկրորդ անգամ լինելու Բագվում, յես գտա նավթային արդյունադործությունը, աշխատանքի և կապիտալի փոխ հարաբերությունները, կյանքն ընդհանրապես այն աստիճանի կերպարանափոխված, կարելի և ասել այն աստիճանի հեղաշրջված, փոր աչքերիս չեի հավատում, փոր 15 տարի առաջ իմ տեսած Բագուն էր:

Բագու համեկուն պես յես իջա Սմբատ Սարգիսբեգյանի բնակարանը, փորի հետ, ինչպես ասացի, կապ եր հաստատված:

Նրա տանը և թե այլ տեղ (զինեվաճառի նկուղում) մի քանի անգամ տեղի ունեցան արհեստավորների, բանփորների ժողովներ, և նրանց հետ իմ ունեցած զրույցների ժամանակ յես այն տպավորությունը ստացա, փոր այդ ժամանակ նրանք ղերազանցապես տարված էին «ազդասիրական» հոսանքով, մանր-բուրժուազական, արհեստավորական, մեղչանական մտայնությամբ: Նրանց մեջ կային 1,2 շատ թե քիչ գիտակից բանփոր-արհեստավորներ, փորոնցից աչքի եր ընկնում Սարուխանյան ազգանունով մեկը, փորը, յեթե չեմ սխալվում, շամախեցի էր և պրոֆեսսորայով փականակադործ:

Յես չեմ կանգ առնի այստեղ նկարագրելու այն ժամանակվա Բագվի կյանքի անցուդարձը, բնորոշելու հասարակական դասակարգերի բնույթագիրքը, փորոնք նորնոր էին հավաքվել և կազմակերպվել, նրանց կենցաղը, մտազբազմունքները, մտավորական և բարոյական աշ-

խարհը. այսքանը միայն պետք է տեսլ, վոր տնտեսական կյանքի այն անարխիական գրութիւնը, վորի մեջ գտնվում էր այն ժամանակ Բագուն, համապատասխանում էր նրա մտավոր—բարոյական աշխարհը: Այն ժամանակից արդեն դոյացել էր Բագվի ազգայրական կոնգլոմերատը (հայ, թուրք, պարսիկ, լեզգի, ռուս, հրեա, «սկոպեց» կոչված ռուս ազանդավորները և յայն)—հասարակական մի խառնուրդ, մի խալոս, վորը վոչ մի հասարակական դեմք իրենից չէր ներկայացնում: Հարկավոր էր մի շատ ուժեղ ֆակտոր, վորը այդ բազմազան, հետեւածին (այլատարր, այլասեռ) հասարակութիւնները մի հայտարարի բերեր, մի դրոշակի տակ առներ: Եվ այդ հզորագուն ֆակտորը մոտ ապագայում դարձավ արդյունագործական կապիտալը, վորը ստեղծեց խոշոր մեքենական նաւթարդյունագործութիւնը:

Յեւ հեռացա Բագվից վոչ այնքան լաւ տպավորութիւն տալի: Մտադիր եի գնալ Թիֆլիս իմ տպավորութիւնները հաղորդելու ընկերներին, բայց ճանապարհածախս չունելի, այդ պատճառով վերադարձա Գանձակ շարունակելու մի քանի թերի մնացած գործեր:

Սանդալը կարճ միջոցում ժողովրդականութիւն էր ձեռք բերել, վոչ թե մշայն Գետաշեն գյուղում, ուր նա պաշտոնավորում էր, այլ նաեւ շրջակա գյուղական հասարակութիւնների մեջ: Նա դերվիշի պէս այս-այնտեղ էր մտնում, այս այն գյուղացիների և գյուղացի ընտանիքների հետ ծանոթանում, ուսումնասիրում էր գյուղական ժողովրդական մատանների կարիքները, ցավերը: Նա սրտագանդ էր մղում, լուսավորում գյուղացու միտքը. նա գյուղի կուլտուր-շինարարական գործի զարգացման աւմեն կերպ աջակցում էր. մինչեւ անգամ սկզբնական բժշկական ոգնութիւն էր հասցնում հիվանդներին, ֆելդշերի գեր էր կատարում գյուղում: Նա աղքատների, թուլիքի, շահագործվողների շահերն էր միշտ պաշտպանում ընդդէմ

գյուղի վաշխառուների, ցեցերի, տիրացուների, «գյու-
քանչիների» և այլ ֆեոդալար տարրերի: (Տես-Հավել-
ված)

Զարմանալի չէ, Վոր այդ տարրերը և գյուղի «գոր-
քաները» նրա դեմ դուրս յեկան, հալածեցին, դավեր
սարքեցին և վերջը հողերը կառավարութեան միջոցով
նրան դարձրին արձակեցին: Նրանք (այսինքն գյուղի
«գորքաները», «ցեցերը» Գ. Դ.), ասում են նրան Գանձակի հո-
գևոր կառավարիչը, ձեզ մեղադրում են Աստծու դեմ,
տերութեան դեմ անվայել խոսակցութեան մեջ... Նրանք
սպառնում են... յեթե Վոր յես նրանց գանգատին տևանջ
դնելու չը լինեմ՝ այն ժամանակ նրանք ուղարկելու են
նույն տեսակ գանգատի միտւս սրինակը նախնադաստին...
«Դարոցի ապագա դրութեան հողածությունը ինձ ստի-
պում է, Վորդի, զգուշ և քաղաքագետ լինել»*) և այլն:
Սանդալը սաստիկ բողբոլում է այդ մեղադրանքների դեմ,
բայց վաշինչ չէ դուրս գալիս, նա, այնուամենայնիվ, հե-
ռացնվում է դարձրին:

1885 թվի ամառը առիթ յեղավ ինձ մի ճանապար-
հորդութուն կատարել Գանձակի գավառում թե գյուղա-
յիների կենցաղը, սոցյալ-տնտեսական դրությունը ուսում-
նասիրելու և թե մանավանդ Գետաբեկ գնալու և հոշա-
կավոր շվեդացի Միմենսի պղնձահանքը տեսնելու, հան-
քափորների դրութեան հետ ծանոթանալու նպատակով:
Մինչև Գետաբեկ հասնելը ճանապարհին պատահող ամեն
մի գյուղում մնումների մի քանի որ տեղեկություններ հա-
վաքելու գյուղացիների նիստ ու կացի, փոխադարձ հա-

*) Տես Սանդալ, «Փորձիկ ասող» վեպ, էջ 168, Մոսկվա 1892 թ. Այդ
վեպի հերոս ուսուցիչ Սոդաթեկը, վորը հիշյալ պատճառով արձակվում է զըպ-
րոցից, ինքը Սանդալն է: Գանձակի հաջորդն էր այդ ժամանակ Անանյա վար-
դապետը: Նրա և Սանդալի մեջ տեղի է ունենում վեպի մեջ տուած բերած
նման մի խոսակցութուն:

Սանդալի և նրա դործունեութեան մասին այսուեղ յերկար կանց չեմ տա-
նում, նրան նվիրված էլիքնի մի առանձին աշխատութուն, վոր, հուսով եմ,
մառ սպաղախում չույս ընծայել:

բարեբախտներն, հողային և այլ հարցերի վերաբերմամբ: Բանանց, Պաշտպաղ, Զաղլիկ (Փիփ)⁹¹ և այլն անցնելուց հետո սկսվում են Գեաթարեզի հրաշալի անտառները: Ենա և անտառում Շամբոր դեռի օփին Զարեքա վանքը, բնության մի գեղեցիկ կուսական վայրում, ժորը ամեն մի տեսողի մեջ, կարող և ժողեորություն, հափշտակություն առաջ բերել: Վանքի վանահայր Աստվածատուր վարդապետի հետ Գանձակից արդեն ծանոթ եի, այդտեղ հյուր եր յեկած մի քանի ժամանակով Գանձակեցի իմ ծանոթ բարեկամ Նիկալայ Մամիկոնյանը, ժորը մտաակա ուռւս Սլավիանկա գյուղի գաւառանում պաշտոնյա եր այդ ժամանակ⁹²): Ինձ տեսնելով միայնակ այդ վայրի յերկրում, հեղեղից անտանելիորեն թրջված, տարերքի սարսափելի իրարանցման ժամանակ՝ նրանք սաստիկ զարմացան:

Նիկ. Մամիկոնյանին հայանեցի իմ ճանապարհորդության նպատակները: Ըստ հարկին հյուրասիրվելուց հետո՝ հետեյալ որը ճանապարհս շարունակեցի գեղի Գեաթարեզ: Գեաթարեզում ծանոթ շունեի, բացի յերիտասարդ լիբերալ Տեր-Շմավոն քահանայից, ժորին գեռ աշխարհական ժամանակից ի վեր ճանաչում եի: Բարեբաղտաբար Գեաթարեզում հանդիպեցի պղնձահանքում ծառայող մի պատանու, Գանձակի գաղտնավարտ իմ աշակերտներից մեկին, ժորը 2-րդ տարին գրասենեկային թե այլ պաշտոնն եր վարում Սիմեոսի զօլոգում: Նրա աղգանուներ, գժրաղտաբար, իմ հիշողությունից բոլորովին դուրս և յեկել:

⁹¹ Փիփ գյուղին շատ մոտ եր գտնվում շիրի մի գաղաղ, ժոր այն ժամանակ շեր գործում:

⁹² Գանձակեցի Ն. Մամիկոնյանը վրդապետ և: Ներկայումս ապրում և Թիֆլիսում: 90-ական թվականներին նա հրատարակել և «Վիշապ» ամսուհով (չխառնել Մանգալի «Վիշապի հետ») մի պատկեր Գեաթարեզի քանդորների կյանքից, ժորի մեջ նկարագրում և քանդորների շահագործումը և վրդապետի գրությունը, այն տեղ առաջ և բերված ուսուցչի մի տիպ վրդապետ քանդորների պրոպագանդիստ—ապիստատը: Ափսոս մշայն, ժոր այդ գրքույկը գրաքննիչի կողմից զոհնշացման և յենթարկվել և այժմս վոշ մի որինտիկ կարելի չե լինում նորել:

Գետաբեկը այդ ժամանակներից արդեն հռչակ եր ստացել իր պղնձահանքով, տեղական յերկաթուղիով, վորը կարում եր գեպի անտառի խորքը և գեպի Ղալաքյանթը յերկար տարածությամբ մի ձանապարհ, հանքի շահագործման այն ձեերով, վոր Սիմենսի ֆիրման սկսել եր կիրառել այդ կուսական վայրի յերկրում: Շրջակա և հեռավոր տեղերից և գյուղերից հոսանք եր ստեղծվել գեպի պղնձահանքը և գործարանը: Գործարանի մոտ հիմնվել եր բանվորների մի մեծ գաղութ:

Հիշյալ նախկին իմ աշակերտի աջակցությամբ ինձ հաջողվեց մի քանի անգամ դավողի բանվորներին հավաքել և զրույցներ ունենալ նրանց հետ: Բանվորներից ստացած իմ տպավորությունը ստակալի եր. բացարձակ անգրագիտություն, հետամնացություն, խորին ազնաւություն և թանձրամտություն, ահա թե ինչով եին նրանք աչքի բնկնում: Իրանք գյուղացիներ եին, վորոնք իրենց նահապետական կյանքից, գյուղական նեղ հորիզոնից զենը վռչինչ չեին տեսել: Հեռացա Գետաբեկից ծանր տպավորության տակ: Վերադարձին յեղա գարձյալ Չովդառ, Նյուզգար գյուղերում. վերջինում մնացի յերկար ժամանակ: Նյուզգարի գյուղացիները հողային վեճ ունենալով գրացի թուրք գյուղացիների հետ, իմ այցելությունից քիչ առաջ բնդհարում եին ունեցել թուրքերի հետ և խիստ ջարդ տվել նրանց: Յես ասիթ ունեցա հայ գյուղացիների հետ ունեցած զրույցի ժամանակ թուրքերի հետ համերաշխության միտք արծարծելու նրանց մեջ: «Ընթարիա և հողային հարցը, ասում եի յես նրանց, շատ սուր հարց և, սակայն պետք ե խույս տալ ըստ կարելույն թուրքերի հետ բնդհարվելուց, պետք և նրանց հետ համերաշխությամբ գործել, նրանց հետ միասին գիմելով կառավարության՝ պահանջել կանոնավորել հողային հարաբերությունները» և այլն: Ահա մոտավորապես այն

*) Տես իմ «Անցյալի հիշգրություններից» գրքուկը՝ էջ 35, 36

լեզուն, վորով հաճելի եր ինձ խոսել այն ժամանակ գյուղացիների հետ: Լաստալի արգելված գրքի ընթերցումը հենց այդ նյութը գյուղում իմ կյանքի հեղաշրջման առաջին նշանավոր դեպքը պետք է համարել:

Իմ այցելած գյուղական շրջանների, Գետաբեզի հանքավորների և դործարանի բանվորների գրության մասին իմ նստացած տեղեկությունների, տպավորությունների և դիտողությունների հիման վրա յես մի գեկուցում պատրաստեցի: Նույն 1885 թվի աշնան սկզբին Սանդախ և յես Թիֆլիսում մեր խմբի ընկերների ժողովում կարգացինք մեր գեկուցումները — նա իր շրջանի գյուղացիության, իսկ յես Բաղվում, Գանձակում կատարված աշխատանքների և զախոռի ճանապարհորդությանս տպավորությունների մասին: Պետք է ասել, վոր այդ գեկուցումները ճշշիչ տպավորություն դործեցին ընկերների վրա, վորոնցից մի քանիսը այդ ժամանակ չափից դուրս լսվատեսս վերաբերմունք եին ցուցադրում դեպի գյուղացիությունը: Կարե՞ր է ասել, վոր այդ ժամանակ կայացած ժողովներում տեղի ունեցած մտքերի փոխանակությունը և տարածայնությունները խմբի անդամների մեջ, ազդեցություն դործեցին (բացասական մտքով) նրանց փոխադարձ հարաբերությունների վրա, արագացրին խմբի կազմալուծումը: Թե վորոնք եին այն պատճառները, վորոնք առաջ բերին խմբի քայքայումը, այդ մասին կիրթձեմ մի քանի խոսք ասել:

|||

ԽՄԲԻ ԿԱԶՄԸ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱԳՈՒՄԸ. ՆՐԱ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ:

Հայ իրականության այդ անդրանիկ հեղափոխական-նարողնիկական թեքումով — խմբի կազմը հետևյալն էր. 1. Քրիստափոր Միքայելյան, 2. Սանդախ (Աղեքսանդր Պետ-

րոսյան), 3. Սաշատուր Մալումյան, 4. Գարս Միրզոյան, 5. Գևորգ Ղարաջյան և 6. Կոստանդին Մեկիրյան:

Սուսմբն ուներ այս կամ այն քաղաքում կամ դավառում կապեր զանազան վատահեղի անձների հետ, վորոնք կատարում էին խմբի հանձնարարությունները: Հարաբերությունները խմբի անդամների մեջ և մանավանդ խմբից դուրս կանգնած մարդկանց հետ խիստ կոնսպիրատիվ բնույթ էին կրում:

Սմբի ամեն մի անդամը ուներ նույնպես իր գործունեություն շրջանում իրեն մոտ ծանոթ գործակիցները, վորոնք իրենց ծառայություններով (տեխնիկական և այլն) վորոշ չափով ոգտակար էին հանդիսանում գործին:

Սմբի բոլոր անդամները առանց բացառություն մտաւորականներ էին, նրանցից յերկուսը գյուղացի ծագում ունեին, մյուսները քաղաքացի էին. հասարակության աշխատավորական, մանր-բուրժուազական խավերից էին. միքանիսը չքավոր ընտանիքի զավակներ էին, իսկ 2-3-ը միջակ ապահով ընտանիքներից: Նրանցիցը 4-ը միջնակարգ կրթություն էին ստացել, իսկ 2-ը բարձրագույն (չավարտած). պրոֆեսսայայով ուսուցիչներ էին, գյուղատնտես, լրագրի աշխատակից—հրապարակախոս և այլն:

Պետք է ասել, վոր չնայելով այն բանին, վոր խումբը ընդհանուր առմամբ նարոզնիկական-հեղափոխական դադափարներով էր ներշնչված և իր բայքերն սկսել էր առաջ տանել այդ ուղղությամբ, այնուամենայնիվ նրա այս կամ անդամի վրա մեծապես ազդեցություն էին գործում նաև այլ կարգի իդեոլոգիական հոսանքները. ազդային, ավելի ճիշտը ազգայնական իդեոլոգիան, լիբերալիզմը, նույնիսկ անարխիզմը վորոշ տեղ էին զբաղել այս կամ այն անդամի աշխարհայեցողության մեջ:

Հանգես զարով 1882-3 թվականների խումբը ընդմիջումներով և առանց սերտ կազմակերպչական կապերի վարեց իր ավելի բան համեստ գործունեությունը մինչև 1885-6 թվականները: Վորքան ավելի ժամանակ էր անցնում, այնքան ավելի նկատելի իր դառնում դադափարա-

կան դիֆֆերենցիալայան խմբի անդամների մեջ: «Ազգասիրական» (ազգային, ազգայնական) իդեոլոգիան, փորձեր մեր մեջ «հայկական հարցի»—տաճկահայերի ազգային ազատագրութեան անվան տակ իր ծագումն եր առել և զարգացման մեծ ծախալ ստացել, սկսում և զաշարոյական գրութեան մեջ դնել խմբի աշքի ընկնող, պատասխանատու անդամներից մեկին—Քրիստոս Միքայելյանին, փորձ առաջ ուռնական մտքով նարոդնիկութեան եր հարած: Գարո Միրզոյանը թերփում և դեպի լիբերալիզմը, Սանջ զալը դեպի նարոդնիկական անարխիզմը:

Ամենամեծ ֆակտորը, փոր անխափր խմբի բոլոր անդամների վրա տարրեր չափերով ազդեցութեուն և գործել — դա «հայկական հարցի» առաջացրած «ազգասիրական» իդեոլոգիան եր իր տարրեր գունափորումներով: Այդ իդեոլոգիային յենթակա եին փոշ թե միայն «հայկական հարց»-ով տարողչապես պաշարվածները, այլ և հայկական լիբերալիզմը, մինչև անգամ հայկական կլերիկալիզմը հետամուտ եին-տարրեր միտումներով—մասնակից լինելու այդ ազգային շարժման:

Խմբի անդամներից մեկը (Սանդալը) 1883 թվին մի բանի անձանց հետ անցավ «Ավետայաց յերկիրը», փորակդ կարճ միջոց մնալուց հետո վերադարձավ Կովկաս. մի ուրիշին (Գ. Ղարաջյան) այդ ժամանակ տեսնում ենք «Յերկիր» անցնելու նույն գաղափարով հափշտակված: Մշուսները նույնպես ազատ չեին այդ բանից և նրանց մտադրագումունքների և գործունեութեան մեջ նայիսնալիզմը, ազգային գաղափարը (թշուրքահայերի ազատագրութեան, նրանց կյանքի մեջ ուֆորմներ մացնելու իմաստով) հաշտ ապրում եր և համակերպվում տեղային գործունեութեան նարոդնիկական ուղղութեամբ վարելու գաղափարի հետ: Խմբակը իր կես լեղալ, կես անլեղալ, հեղափոխական գործունեութեան յերերուն, թույլ բալլերով փաստորեն գոյութեուն ունեցավ գրեթե միատեսակ գա-

դափարական դրոշի տակ մինչև 1885-6 թ.թ. 1885 թվի վերջերն արդեն մենք տեսնում ենք խմբակի սակավաթիվ անդամների մեջ սաստկանում են տարածախնություններ, վորոնք քանի դեռում, այնքան ավելի անհարկն են դարձնում նրանց փոխադարձ համաձայնությունը զարք, միմիջանց հասկանալը, ընդհանուր լեզու գտնելը։ Խմբի կենտրոնական գեմբը (Գրիտա. Միքայելյան) վորի մեջ փոքր ինչ առաջ նկատելի էր միայն թերում՝ 1886 թվից սկսում է բացարձակորեն հակվել դեպի «ազգասիրական» հոսանքը, հափշտակվում է, կարելի է ասել, «հայկական հարց»-ի դիպումատիական ճանապարհով լուծման հնարավորություններով։ 2-ը (Միրզոյան, Մալումյան) տարվում են գրեթե բացառապես խաղաղ, լիբերալ գործունեությամբ, չժխտելով միաժամանակ «հայկական հարցի» այս կամ այն ձևով լուծելու կարևորությունը։ Խմբի անդամներից 2-ը (Մանգալ, Դարաջ.) համարելով «հայկական հարց»-ը գրեթե բացառապես հենց իրենց տաճկահայերի ազատագրության գործ, թողնում են գործունեության այդ ասպարեզը և անձնատուր են լինում այնուհետև հասարակական, քաղաքական գործունեության նոր ուղիներ վորոնելուն։

Այդպիսով, ինչպես տեսնում և ընթերցողը, մեր յերկրում նարոդնիկական սոցիալիզմի զարգացման մահարեր հարված ավեց «հայկական հարցը», վորը կապ ուներ բացառապես տաճկահայերի կյանքի հետ։ Յեթե մինչև անգամ «հայկական հարցի» իդեոլոգիական գորեզ հոսանքի ազդեցությունից ազատ լինեք բոլորովին հայ հասարակական միաքը և մեր յերկրում այդ բանից անկախ՝ նարոդնիկական մի շարժում առաջ զար իր քաղաքական և տրեստական տենդենցներով մատավորապես այնպես, ինչպես այդ տեսնում ենք Ռուսաստանում 70-ական թվականներին և հետո, սխալված չենք լինի ասելու, վոր նրա զարգացումը մեր յերկրում մեծ ծավալ չեր ստանա, նրա գոյությունը շատ կարճատե կլինեք, կերևար և շուտով էլ

կանցներ վորպես մի ողբերկույթ (մետեորա): *) Սակայն նրա այդ կարճատև գոյութիւնը մեր յերկրում սոցիալիզմի նորմալ զարգացման համար թերևս կարող էր մի ետապ հանդիսանալ, ինչպես այդ ցույց է տալիս ուսումնական սոցիալիզմի պատմութիւնը: Մեր յերկրը իր զարգացման ճանապարհին հանդիպեց խութերի, վորոնց նմանը Ռուսաստանը չունի:

Պետք է նկատել, վոր յեթե նարոգնիկութիւնը Կովկասյան իրականութեան մեջ չզարգացաւ (**), զրա զլխավոր պատճառներից մեկը պետք է համարել և այն, վոր Անդրկովկասի տնտեսական կյանքը իր զարգացման հենց առաջին քայլերից բռնում է խոշոր առևտրա-արդյունաբերութեան զարգացման ուղի: Անդրկովկասյան յերկաթուղային գիծ անցկացնելը, Բաղվի նավթի և մեր յերկրի այլ հանքերի (պղինձ, մարգանց և այլն) արդյունագործութիւնը, ներքին և արտաքին առուստուրը և այլն համեմատաբար կարճ միջոցում խոշոր չափերի հասնելով՝ ազդարնակութեան դանազան դասակարգերի փոխհարաբերութիւնների մեջ համապատասխան հեղաշրջումն առաջ բերեց:

80—90-ական թվականներին, մի շրջան, յերբ կապիտալիզմը սկսում է զարգացման հաղթական քայլեր անել, յետ մղելով մանր արդյունաբերութեան և առուստուրի հնա-

*) Դրա փայլուն ապացույցը տալիս է մեզ վրայ հասարակական կյանքի զարգացման պատմութիւնը: Վրացիները Վրաստանից դուրս մի ոտաք յերկրում չեն ունեցել «հայկական հարցի» պէս միջազգային, գիւղատնտեսական մարտով «վրացական հարց», վորի հիւրաններում կաշկանդված մնալ, ինչպես մեզ մոտ, նրանց հասարակական մարի զարգացումը: Չնայելով այդ բանին, իացի անհատական, պատահական դեպքերից, նարոգնիկութիւնը վորպէս հոսանք, չզարգացավ Վրաստանում:

**) Նկատենք տշտեղ, վոր 1900-ական թվականներից մեր յերկրում (ինչպէս և մարդիկ Ռուսաստանում) վորոշ զարգացում ստացավ մի նոր նարոգնիկական կուսակցութիւն—եսերական կուսակցութիւնը, վորը թէև համարվում է ուսումնական 70, 80-ական թվականների նարոգնիկութեան ժառանգորդը, բայց և այնպէս այնքան կերպարանափոխված է համապատասխան կյանքի նոր պայմաններին, վոր իր նախորդից զգալի կերպով տարբերվում է, հանգիստանալով վորպէս մանր-բուժութեան, գերազանցապէս դէպքայական կուսակցութիւն:

վանդ ձևերը, իսկ Բաղվի խոշոր կապիտալիստ. նավթարդյու-
նագործությունը մասնավորապես՝ կատարյալ հեղաշրջումն
և առաջ բերում յերկրի կյանքի բոլոր բնագավառներում,
հանդես է գալիս մի նոր հասարակական դասակարգ, վորը
առաջ դրույթյուն չունի և կամ դրույթյուն ունի սաղ-
մնային վիճակում, և վորը հասարակական կյանքի արմա-
տական հեղաշրջման, հասարակության ամենառաջավոր
իդեալների դրոշակակիրն էր, արմատական հեղափոխական
մարքի և զաղափարի կրողն էր, ժողովրդի լեզվով «զրոգը»
բուրժուազյայի և բոլոր կեղեքիչ, շահագործող դասակար-
գերի—դա պրոլետարիատն էր իր միջազգային
սոցիալիստական տենդենցներով, վորը արդյունա-
դործական կապիտալիզմի գորգացման զուգահեռ՝ զարգա-
նում և աճում էր վերջին 3-4 տասնյակ տարիների ըն-
թացքում մեր յերկրում: Ահա այն նշանավոր եղբայրն
(80-ական, 90-ական թվականների), յերբ անտեսական
զարգացումը վերոյիշյալ ուղղությամբ ինչպես ամեն բան
և ամեն ինչ, այնպես էլ ինտելլիգենցիայի տրամադրու-
թյունները, հոգեբանական աշխարհը մեծամեծ փոփոխու-
թյունների յենթարկեց: Հայ ինտելլիգենցիայի ահագին
մասը հարում և բուրժուազական իդեոլոգյային, սպասա-
փորում և բուրժուազյային. նրա գլխավորապես դեմոկրա-
տական տարրերը տարվում են «հայկական հարց-ով. հա-
սարակական ֆոնի վրա շուտ չեն յերևում պրոլետարական
իդեոլոգյային հակված և կողմնակից ինտելլիգենտ անհատ-
ներ. միայն 90-ական թվականներեց յերևան են գալիս
յեղակի անհատներ, իսկ 900-ական թվականների սկզբից
պրոլետարական սոցիալիզմի կողմնակից և գործող հայ
յերիտասարդ ինտելլեկենտական և բանվորական խմբեր,
վորոնք խիստ պայքարի մեջ են մտնում բուրժուազական
և նացիոնալիստական ինտելլիգենցյայի դեմ:

80-ական թվականների նարոդնիկական խմբակի ան-
դամները նույն վիճակն ունեցան, վարպես մտավորական-

ներ, ինչպիսի վիճակ ունեցաւ ընդհանրապէս ինտելիգենցյան Խմբակը քայքայվեց «հայկական հարցի», լիբերալ-բուրժուազայի իդէոլոգիական հասանքների ազդեցութեան տակ:

Նրա կարճատե գոյութեան, նրա հեղափոխական գործունեութեան անկալունութեան պատճառներից մեկն էլ այն էր, վոր խմբակի անդամներից և վաղ մեկը չէր ներկայացնում իրենից թեորեաթիկական մեծութիւն. վաղ վոր նրանցից խորապէս չէր ուսումնասիրել և չէր էլ կարող ուսումնասիրել այն ժամանակվա պայմաններում ուսական նարոդնիկութեան սոցյալ-հեղափոխական թեորիան, վարպետի հանդէս դալով իր ժամանակին հասարակական գործունեութեան ասպարեզ հեղափոխական մտքի հարուստ պաշարով, կարողանալ լայն մասշտաբով պայքար մղել նացիոնալիստական, լիբերալ հասանքների դէմ: Ճշմարիտ և, Թիֆլիսում և ալուր յերևում էին այդ ժամանակ մեկ-մեկ Ռուսաստանից աքսորված ուս. հեղափոխաններ, վորոնք վստօթիկանական հսկողութեան տակ ազրում էին մեր յերկրում ժամանակավորապէս. խմբակի այս կամ այն անդամը աշխատում էր կոնստալիտի մեջ մտնել նրանց հետ. նրանցից հնարավոր էր լինում յերեմն անդեղալ (գլխավորապէս նարոդնիկական-հեղափոխական ուղղութեամբ) գրվածքներ ստանալ. բայց դա շատ քիչ էր. պատահական, հատուկապէս հեղափոխական գրականութիւնը չէր կարող թեորեաթիկական քաւարաւ պաշար տալ: Այդ պատճառով պատմական կրիտիկան չի կարող խմբակից մեծամեծ պահանջներ անել. նա չի կարող հաշվի չառնել մեր այն ժամանակվա գրութիւնը, այն ժամանակվա կյանքի պայմանները: Մեր ժողովուրդը խեղճ, փոքրիկ ժողովուրդ է. նա, ինչպէս և այլ ժողովուրդներից փոքրերը, չեն սովել և չեն տալիս սովորաբար մտքի տիտաններ, արտակարգ հատկութիւններով ուժոված մեծ մարդիկ: Այնուամենայնիւ 80-ական թվականների այդ

մանուկ հեղափոխական խմբակը իր փոքրությամբ, իր աննշան գործունեությամբ չե կարող սոցիալիստների և սոցիալիստ գրողների ուշադրությունից վերադնել: Վոչ նացիոնալիստական, բուրժուազական պատմությունը, այլ հեղափոխական սոցյալիզմի պատմությունը իր եջերում կառ, անտարակույս, այդ խմբակին իր արժանի տեղը: Խմբակի անդամներից վոմանք դարձան ապագայում աչքի բնկնող գործիչներ հասարակական, բազաբական—հեղափոխական գործունեության ասպարեզում և այս իրողությունը միուս կողմից գալիս և հաստատելու, վոր խմբակը իր մանկական հասակի շրջանում չեը կարող վորոշակի հակումներ, տենդենցներ չունենալ գեպի բաղաբական, սոցյալ-հեղափոխական գործունեությունը:

• Մի բանի կենսադրական տեղեկություններ խմբակի ամեն մի անդամի մասին:

1. Դրիստաֆոր Միքայելյան. Վերին-Ագուլեցի, խեղճ բնտանիքի զավակ: Իր կրթությունը ստացավ Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտում: Աշակերտական հասակից մասնակցում եր աշակերտական անկեղալ ժողովներին: Ինստիտուտն ավարտելուց հետո վարում եր յերկար տարիներ ուսուցչական պաշտոն Վերին-Ագուլիսում և Թիֆլիսում: Նարոդնիկական խմբակի բայրայվելուց 2—3 տարի հետո (1887—8 թ. թ.) գնաց Մոսկվա, ուր մի առ ժամանակ լսում եր հասարակական գիտություններից պասսիոսություններ բարձրագույն դպրոցում: Նա գլխավոր հիմնադիրն եր «Հայ Հեղ. Դաշնակցություն» կուսակցության, վորի կազմակերպչական հիմքը դրվեց նրա ջանքերով 1890 թվականի 2-րդ կիսամյակին: Նա աչքի բնկնող դեր խաղաց, վորպես Դաշնակցության ականավոր հիմնադիր «հայկական հարցի» գիպոմատիական ուղիներով լուծելու գործունեության մեջ, 1898 թվին անցավ արտասահման կուսակցական գործերով, գլխավորապես կուսակցության «Դրոշակ»

կենտրոնական որդանք ապահով հիմքերի վրա դնելու նպատակով: Նրա ջանքերով հիմնովեց Պարսիզում «հայկական հարցի» ջերմ պաշտպան «Pro Armenia» ֆրանսերեն լեզվով թերթը, վորին աշխատակցում էին ֆրանսիացի ականավոր գրողներից և սոցիալիստներից վամանք:

Բուլղարյայի մայրաքաղաք Սոֆյայի մոտ պայթուցիկ նյութերի հետ փորձեր անելու ժամանակ սուրբ պայթյունից վիրավորվելով՝ վախճանվեց 1905 թ.^{*)}:

2. Սանդալ (Աղեքսանդր Պետրոսյան). Թիֆլիսեցի, չքավոր ընտանիքից: Սա իր միջնակարգ կրթությունը ստացած Ներսեսյան դպրոցում. բայց չավարտեց, վորպես րմբոստ աշակերտ արձակվեց դպրոցից: 1883 թվին նա մի քանի ընկերների հետ անցավ Թյուրքյուս և Մշո գաղտում մի քանի ամիս ուսուցչական պաշտոն վարելուց հետո՝ վերադարձավ Կովկաս: Ապրեց Ռուսաստանի մայրաքաղաքներում—Պետերբուրգ, Մոսկվա, ուր մի քանի տարի շարունակ յերկաթուղային ծառայության մեջ էր և միաժամանակ ուսանում էր: 1890-ական թվականների վերջերը վերադարձավ Կովկաս (Թիֆլիս) բոլորովին հիվանդ, նա տառապում էր անտանելի ջղային հիվանդությունից, վոր տեղց յերկար ժամանակ: Առողջությունը մասամբ վերականգնելուց հետո՝ շարունակեց հայոց դպրոցներում պաշտոնավորել: 1882 թվին գրեց տանկահայերի կյանքից մի պատկեր «Վիշապ» անունով, իսկ 1885-6 թ. թ. Գեառաշեն դյուղում, ուր նա այդ ժամանակ ուսուցչական պաշտոն էր վարում, իր 2-րդ աշխատությունը «Փոքրիկ Աստղ»՝ վեպ դյուղական կյանքից:

Ահա շատ կարգացած մի յերիտասարդ ինտելլեգենտ, ընդունակ, սրամիտ, հաստատակամ և համառ թե խոսքի և թե գործի մեջ. նա, սակայն, դժբաղտություն ունե-

*) Քր. Միքայելյանի ընտելթագրի և կյանքի մասին լրացուցիչ տեղեկություններ ընթերցողը կարող է գտնել իմ «Անցյալի հիշողություններից» գրքուկի մեջ, Թիֆլիս 1918 թ.

ցով կյանքի մեջ մեծամեծ անհաջողությունների հանդիպելու—յերկարատև հիվանդություն, նյութական մեծ զրկանքներ և այն Գլխավորապես կյանքի այդ դառնությունները մեղցրին նրա մեջ ամեն ինչ. նա չօվեց այն, ինչ վոր կարող էր և սպասելի էր նրանից: Նա իր անկման շրջանում պահպանեց մինչև անգամ իր վաղեմի կարողությունների հետքերը. նա դարձյալ սրամիտ էր, խայթող, վրդովվող մտրդկային և բնկերական ամեն տեսակ սոցիալությունների դեմ:

Նա բնկերների շրջանում հայտնի էր վորպես ուղիկալ, նույն իսկ անարխիստական չափերի համնող տրամադրությամբ մի անձնավորություն: Ազգային վոչ մի քաղաքական հոսանքին նա չհարեց: Վերջին տարիները նա համակրություն էր ցույց տալիս դեպի ս. դ. կուսակցությունը: Մեռավ նա փողոցում 1922 թվին 62—3 տարեկան հասակում ամենաաղքատ վիճակում:

3. Խաչատուր Մալումյան. Մեղրեցի, դյուղական ապահով բնտանիքից, Ներսեսյան դպրոցն ավարտելուց հետո, նա սկսեց աշխատակցել «Մշակին». նա շատ շուտով դարձավ «Մշակ» թերթի յեռանդուն աշխատակիցներից մեկը և Գր. Արծրունու աջ թևը: Յեռանդուն, ճարպիկ և բնգունակ յերիտասարդ էր, լավ գրող-հրապարակախոս և լավ խոսող (հոեաոր): Նա հայտնի էր վորպես ազգային առաջադիմական ուղղությամբ մի գործիչ. այդ ուղղությամբ նա մոտ մի տասնյակ տարի ծառայեց Արծրունու լիբերալ հրապարակախոսական գործունեության: Վերջը նա հարեց «Դաշնակցության» Թողնելով վերջնականապես «Մշակի» խմբագրությունը («Առաքելյան-Քալանթարի շրջանում») Մալումյանը Քր. Միքայելյանի հրավերով ուղևորվեց Շվեյցարյա (Ժնև) «Դրոշակ»-ի խմբագրության մեջ աշխատելու. նա դարձավ այնուհետև Քր. Միքայելյանի գլխավոր աջակիցը և «Դաշնակցության» աչքի բնկնող լիդերներից մեկը: 1915 թվին նա

գանձում եր Պոլսում. այդ թվին թյուրքիայի հայ ժողովրդի ընդհանուր կոտորածի ժամանակ Խ. Մալումյանը Պոլսից բազմաթիվ հայ ինտելիգենտական խմբերի հետ արտորվելով Անատոլյայի խորքերը, նահատակվում և իր մյուս ընկերակիցների հետ մյաժամանակ թյուրք բարբարոսների ձեռքից:

4. Գարո Միրզոյան. Թիֆլիսեցի. ապահով ընտանիքից: Կիևի համալսարանի նախկին բժիշկ-ուսանող, անկարող յեղով ավարակ իր բարձրագույն ուսումը: Ուսանողական շարժումներին մասնակցելու պատճառով նրան արտորում են Կովկաս իր ծննդավայր քաղաքը — Թիֆլիս 70-ական թվականների վերջերը: Այստեղ յերկար տարիներ ուսուցչական պաշտոն եր վարում Ներսեսյան դպրոցում և Արհեստավարաց դպրոցում: Ներսեսյան դպրոցից անձակվում և փոխեն «անբարեհույս» ուսուցիչ: Յերիտասարդ հայ մտավորականներից շատերը ճանաչում են «Գարոյին», փորը փորոշ ժողովրդականություն եր վայելում նրանց չըջանում: Ուսանողական նստարանը թողնելուց հետո նրա մեջ նշմարելի եր հեղափոխական տրամադրություն նարողնիկական աենդենցներով, սակայն տարիներ անցնելուց հետո նա հարեց լիբերալիզմին, հոգատար ուշադրությամը հետեկով, փորպես շափավոր լիբերալ, հայ յեկեղեցական, կղերական հարցերին:

Մեռավ Թիֆլիսում 1902 թվին:

5. Կոնստանդին Մելիքյան. Գանձակեցի, Գանձակի Մելիքյանների հայանի տոհմից: Պետերբուրգի «Лесной институт»-ի նախկին ուսանող, փորին, սակայն, զանազան պատճառներով չեը հաջողվել ավարակ իր ընտրած մասնագիտությունը:

1883 թվից սկսած՝ նա մի քանի տարի վարեց Գանձակի հայոց յերկեսու դպիոցների աեսչի պաշտոնը, միաժամանակ Գանձակի «Զազալու» կոչված արգավանդ դաշ-

տում իր յեղբայրների հետ հողի մշակութայն գործով եր
գրադպած:

Մեկիքյանը հարեց Քիֆլիսի խմբակին ավելի ուշ:
Նա Պետերբուրգում ուսանողութայն ժամանակ «Նարոդո-
վոյան» կուսակցութայն համակրողներից եր: Յերբ
յես նրան ավեցի կարգալու հայ գաղթողների փակման
առիթով խմբակի Քիֆլիսում հրատարակված անկեղալ
թուղթիկը, նա բուռն ցանկություն հայտնեց ոգտակար
հանդիսանալ խմբակի հեղափոխական գործունեութայն:
Յես նրան ծանոթացրի Գանձակում խմբակի անդամ Սան-
դակի հետ և ապա Քիֆլիսում Քր. Միքայելյանի հետ:

խմբակի կարճատև գոյության ընթացքում նա գլխա-
վորապես նյութական աջակցությամբ մի քանի կարևոր
ծառայություններ մատուցեց խմբակի անդամներին: Մե-
ռավ Գանձակում, յեթե չեմ սխալվում, 1888 թվին:

6. Գեորգ Ղարաջյան. Քիֆլիսեցի, չքավոր ըն-
տանիքից. իր միջնակարգ կրթությունը ստացավ Ներսե-
սյան դպրոցում, իսկ բարձրագույն-արտասահմանի հա-
մախաններում. նախ՝ Ֆրանսյայում և ապա Շվեյցա-
րիայում-ժընևի համալսարանում:

1886—7 թվից հարելով վերջնականապես մարքսի-
ստական իդեոլոգյային՝ բախտավորություն ունեցավ դի-
տական սոցյալիզմի հետևողը լինելու մինչև իր ծերու-
թյան խորին հասակը:

IV.

**1884-5 թ.թ. ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ
ԽՄԲԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՆԼԵԳԱԼ ԹՌՈՒՑԻԿԻ ՊԱՏՃԵՆԸ.
ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՌՈՒՑԻԿԻ ՄԱ-
ՍԻՆ. ԿՈՄՄԵՆՏԱՐՅԱՆԵՐ:**

Առաջ ենք բերում այստեղ ամբողջապես հայոց գրող-
րոցների փակման առիթով թուղթիկի պատճենը, վերի
խկականը վերջերս դանվել և Քիֆլիսի ժանդարմական

արխիւներում և ներկայումս գտնվում և Հայաստանի հեղափոխութեան թանգարանում.^{*)}

ՀԱՅ ՅԵՂԲԱՅՐՆԵՐ ՅԵՎ ՀԱՅ ԲՈՒՅՐԵՐ

Այսօր անմենքիդ առաջ կատարվում և մի սարսափելի ավազակութիւն, մի յանդուգն բաշխութեանութիւն, մի խայտառակ բռնարարութիւն՝ Ռ Ո Ւ Ս ա ջ մ ի ա պ ե տ ու թ յ ու ն ը ի բ ե ն յ ա տ ու կ՝ բ ո ն տ կ ա լ ու թ յ ա մ ր փ ա կ ու մ ե մ ե Ր դ պ ր ո ց ն ե Ր ը^{**)}։

Թեթևամիտ տղաները, գեպի ամեն սուրբ բան անտարբեր վերաբերուող հաստափոր բուրժուաները, մեր պճնասեր տիկիներն ու որիորդները, վերջապես ոգով և մարմնով ապականված՝ ի բ ե ն ի ն տ ե լ ի դ ե ն տ անվանող դասը խնարկե թեթե, շատ թեթե աչքով են նայում այդ անորեն կերպիվ կատարվող իրողութեան վերա։ Բայց արդեւոք հեշտ և տանել այդ հարվածը, միթե պետք և անտարբեր նայենք մենք՝ հայերս՝ այդ անխիղճ անարդարութեան վրա, ահա հարցը ինչու՞մն եւ Մեր ուսումնարանը և Ազգային յեկեղեցին, կարելի ե տակ, հենց առաջին դարերից սկսած այնպիսի սերտ կապերով եին միացել իրար հետ, վոր կարծեք թե անկարելի եր մեկը առանց մյուսի յենթադրել անգամ։ Մեր ուսումնարանը մեզ համար Սուրբ Տաճարի պես մի սրբավայր եր, մեր փառափոր անցյալից մեզ մնացել եր յերկու սրբութիւն՝ ազգային յեկեղեցին և ազգային դպրոցները։ Այդ յերկու սրբութիւններն եին, վոր պահպանելով մեր լեզուն, պահպանեցին նաեւ մեզ իբրեւ մի ամբողջ Ազգութիւն։

Մենք, յեղրայրներ և բույրեր, լավ եինք հասկացել, վոր մեր Ազգային դպրոցից և Ազգային յեկեղեցուց դուրս

*) Թուացիկ պատաններ տապաքում ենք այնպես, ինչպես մենք ստացել ենք Յերեանից։

**) Ընդգծումները ամեն տեղ թուացիկինն եւ։

չկա փրկութիւն մեզ համար... Առանց այդ յերկու ամե-
նագործող Ազգային հիմնարկութիւնների մենք շատ վա-
ղուց կը լուծվեինք, կանհետանայինք աշխարհի յերեսից-կուլ
կզնայինք:

Յեւ իհա աշտոր, յերբ մեր Ազգային դպրոցը՝ հին
սխուստիկայի կապանքներէց նոր ազատված՝ պետք և
իրականացեսցուց տար իր ուլթի մեծութիւնը, այդ
վաղուց փայփայած բոսքին յայտնվում և մի բռնակալ
և ձեռքի մի շարժվածքով փոշնշացնում և այն, վոր մենք
դարերի ընթացքում հազիվ կարողացել յենք բարե-
կարգել:

Բռնակալ Ալեքսանդր յերրորդը քարուքանդ և անում
հայոց դպրոցը — մի ահաղին պետութեան թագաւորը պա-
տերազմ և յայտնում մի փոքրիկ ազգութեան:

Բայց ինչու յենք դարմանում:

Ռուսաց բռնակալների քաղաքականութիւնը վաղուց
յայտնի և ամենքին — զանազան արտոնութիւններ տալով
իրեն հպատակեցնել փոքրիկ ազգութիւնները, նրանց հա-
ղար ու մի խոստմունքներ անելով, դաշնադիրներ զրելով,
իսկ հպատակեցնելուց հետո՝ աշխատել փոքր առ փոքր
փոշնշացնել տված արտոնութիւնները, ծծել նրանց բոլոր
կենսական ուլթերը և ապա դեն շարակ նրանց քամած
լիւննի պես:

Ինչ արեցին ռուսաց բռնակալները վրացիների հետ,
այն ևս անում նաև հայերիս հետ: Սկզբում խորամանկ
խարերայութեամբ մեր միջոցով մեր Արարատեան քաջերի
արշունով հաստատեցին իրենց պետութիւնը ամբողջ
Անդրկովկասում, մեր արշան և ոսկերաց վերա հիմնեցին
իրենց բռնակալութիւնը, Ռուսաստանի մի անապահով
սահմանի վերա և իրենց շտիկներով շրջապատեցին նաև
մեզ, աշուհեաւ այդ շտիկները դարձրին և դեպի մեր
կրծքերը: Այո, մի քանի տասնյակ տարի առաջ ռուսաց
մի բռնակալ կայսրի յատուկ ստորագրութեամբ մեզ խոս-

տանում եին Արարատյան նահանգի անկախ ու թշուառներն: խոստանում եին Անիին, Վաղարշապատին վերադարձնել իրենց վաղեմի կյանքը, փառքն ու իշխանությունը: սակայն ամենաամապնդի կերպով ուրացան իրենց ստորագրությունը և այդ բավական չհամարելով՝ այսօր ել մի ուրիշ բռնակալ Անիի բեկորներին ավելացնում և և մեր գպրոցների ավերակները:

Միրեկի յեղբայրներ և քույրեր, ի սեր Ազգության և մեր Ազգային յեկեղեցիո լավ կշռեցեք այսօր կատարվող իրողությունը, լավ իմացեք, վոր դա մեզ, ուստահայերիս համար, մահու և կենաց խնդիր է:

Ի՞նչ կարող յենք անել մենք, կպատասխանեք դուք, քանի վոր այսօր նույնիսկ հարյուր միլիոն ուսու ժողովուրդը տքնում և յուր բռնակալի լծի տակ:

Այո, հարյուր միլիոնից բաղկացած այդ ժողովուրդը նույնպիսի դո՛հեր են իրենց բռնակալների ձեռքում, վորպիսին և մենք ենք, բայց մի մոռանաք, վոր այդ ժողովուրդը այսօր թե վաղը կարող և ազատվել այդ լծից և իհարկե այդ ազատությունը ձեռք բերելու համար նա պործում է, միջոցների և դիմում, վերջապես այդ բազմաթիվ ժողովուրդը ճնշված և ավելի անտեսական կողմից և նա պահպանելով յուր լեզուն, պահպանում և և յուր միությունը, յուր ամբողջությունը:

Ռուսաց բռնակալները իհարկե շատ լավ եին հասկանում և հասկանում են, վոր փոքրիկ ազգությունները խեղդելու համար պետք է վոճնչացնել նորանց և լեզուն և յեկեղեցին: Վրացիների հետ այդպես վարվեցին՝ դեռ վոճնչացրին նորանց ասանձնացած յեկեղեցին, միացնելով իրենց հետ, իսկ այժմ ձեռք ավին նորանց լեզվին: բայց հայերիս հետ վարվում են այլ կերպով. դեռ քանդում են մեր Ազգային գպրոցները, նրանց հետ մեր քաղցր լեզուն և ապա դիմեն մեր յեկեղեցուն, վորի վերաբերմամբ մինչև այսօր մի փոքր զգուշ են վարվել, վորովհետև մեր

յեկեղեցին շատ ինքնուրույն և և այդ չափ հեշտ չենրան կլաներ:

Ռուսաց միապետը առաջարկում և մեզ՝ կամ մեր դպրոցները իրեն հանձնենք կամ բոլորովին փակենք և այդ անում և մի այնպիսի ժամանակ, յերբ մեր կաթողիկոսական դահլից չէ հնչվում մեր հայրապետի ձայնը, յերբ այդ կաթողիկոսական դահլից զեռ ևս քողը չի վերացել... Սինհոդոսը յերկու-յերեք ամիս ժամանակ եր խնդրում, փորպէս զի մեր դպրոցները և յեկեղեցու Տերը՝ մեր միյակ պարծանք կաթողիկոսը ինքը կարողանար վճռողական պատասխան տալ. բայց ռուսաց բռնակալը և նորա աջ ու ձախ ձեռքերը քաջ յայտնի Տոլստոյներ, Դեկանոզներ, Դոնդուկովներ, Յանովսկիներ—այդ փոքրոգիները, զեսպոսաների խորհրդածուները, վախուկ կառավարիչները իրենցն են պնդում, դուցե, վախենալով, փոր կաթողիկոսի բնարությունից հետո ավելի կբարգովի ուսումնարանների հարցը:

Հայոց Ազգային ուսումնարանների շենքերում արդեն փայլեցին (թուղթիկի պատճենում յերեկ սխալմամբ դրւոված և «վայեկեցին» բառը. Գ. Ա.) ռուսաց շախկներ, չրխկչրխկացին զինվորների շարներ... Սարսափելի տեսարան. մի կողմից անդուլթ դահլիճներ, իսկ մյուս կողմից անմեղ մանուկների, վարժուհիների և ուսուցիչների լաց ու կոծը:

Շախկներով և շարներով, ռուսաց բռնակալներ, չկարողացաք լեհացիներին, փոր իրենց լեզուն (այստեղ յերեկ արտագրելու ժամանակ նախադասությունը չէ վերջացած. Գ. Ա.), ձեր արշավանքները մայրոքների լեզվի դեմ նույնպէս հակառակ արդյունք ունեցան:

Հայեր, միթե այժմ ել չեն բացվելու ձեր աչքերը, միթե այժմ ել մենք չպետք և հասկանանք ռուսաց բռնակալների բռնած բնթացքը հայերի վերաբերմամբ:

Տաճիկ բռնակալը յափշտակում է մեր սեփականությունը, մենք աշագակում, զոռում, բողբոռում եինք անիրավության դեմ, բայց ուսու-բաշխուզուկը քանդում է մեր սրբավայրերը—մեր դպրոցները, պատերազմ յայտնում մեր լեզվին և մենք գլուխներս խոնարհեցրած ախու վախ ենք քաշում միայն։ Մեր լեզուները հանում են արմատից և մենք փոխանակ բռնանցքը ցույց տալու (ընդգծումը մերն է. Գ. Ղ.) մեր վիզերն ել դնում ենք անամոթ դահիճի կացնի տակ։

Յեթե այսօր մենք, հայերս, անկարող ենք դիմադրել խաբերա բռնակալին երին, գոնե մենք կտրող ենք մահի վճիռ կարգալ այդ բռնակալներին ձեռքի աակ գործող այն ստոր սողուններին, վորոնք մեր լեզուն և նորա հետնակ մեր ազգությունը մահու են դատապարտել։ (Ընդգծումը մերն է. Գ. Ղ.):

Իսկ ինչ կվերաբերի մեր հայ լեզվի տարածելուն՝ թող անիծվի այսուհետև այն հայը, վոր հանդիպելով մի այլ հայի, խոսի այլ լեզվով բացի՝ հայերենից, թող նդովվի և հիմնայատակ կործանվի այն հայի ընտանիքը, ուր բացի հայերեն բառից, մի այլ հնչյուն լավի, թող արհամարանքով և զզվանքով հիշվի ազգի և ապագա սերունդի առաջ այն մայրը, վոր յուր կաթի հեաչի անուցանի զավակին և յուր մայրենի բարբառը—հայերեն լեզուն։

Մեր դպրոցները փակվում են շախմատի ոգնությամբ, թող այդ լինի բռնակալների միակ մխիթարությունը։

Յուրաքանչյուր հայ բնատանիք թող ներկայացնե իրենից առանձին հայ գրաբույր։

Այսուհետև մեր միակ յույսը թող մենք ինքներս լինենք, այսուհետև ել ուրիշի մանավանդ ուսաց կառավա-

րության վերա վստահ չլինենք և յերբ իբրև ճշմարիտ հայ մեր սուրբ (պարագր. Գ. Դ.) կը կատարենք, այն ժամանակ, հավատացեք, հայեր, յաղթութիւնը արդարի կողմն և լինելու:

Յաղթութիւնը մեր կլինի:

Ազատ տպարան, փետրվարի 22, 1885 թ.

Հայաստանի հեղափոխական թանգարանի ինձ հաղորդած տեղեկութիւններէ համաձայն թուցիկի որինակներէց 1885 թվին գտնվել և Գանձաւում և Թիֆլիսում: Այդ և ասում թուցիկի առիթով ժանդարմական վարչության կազմած արձանագրութիւնը: Այդ արձանագրության մեջ հայտնվում և նույնպես, վոր անոնիւմ նամակով թուցիկը ուղարկվել և «ժողովրդական» դպրոցների տեսչին» («инспектору народных училищ»), իսկ սա իր հերթին ներկայացրել և այդ թուցիկը նահանգապետին: Թիֆլիսի цензурный комитет-ը ցուցմունք և տվել, վոր այդ թուցիկը չէր կարող Թիֆլիսում տպագրվել, վորովհետև այնտեղ նման տեսակի շրիֆտ բնավ չկա: Այնուհետև հիշատակված և արձանագրության մեջ թե թուցիկի հեղինակը հայտնաբերված չէ:

Ժանդարմական արձանագրության առիթով հարկ եմ համարում հայտնել, վոր Թիֆլիսի գրաքննիչ կոմիտեն բոլորովին սխալ ցուցմունք և տվել—թերևս այդ առիթով ամենայն զլխացավանքից ազատ լինելու համար: Թուցիկը տպագրվել և Թիֆլիսում. իսկ նրա չհայտնաբերված հեղինակը—Թիֆլիսի հայ նարոդնիկական-հեղափոխական խմբակն էր, վորի գաղտնի գոյութիւնը անհնարին և դարձել հայտնաբերել շնորհիւ այն հանգամանքի, վոր սխրանկայի մտքով յերբեք չէր կարող անցնել թե այդ աստվածավախ, խավար ժամանակներում Կովկասի վորեւ տեղում կարող էր հեղափոխական մի ահա տեղի ունենալ մի խմբակի կամ այս-այն անհատի կողմից:

Այդ թուղցիկը տարածվեց մոշ միայն հայաբնակ շրջաններում, այլ և նրա հեղինակ խմբակը կարևոր և համարել հասցնել թուղցիկը նաև այն ժամանակ ուսւ գործող հեղափոխականներին: Այդ բանը հաստատելու համար հարկ եմ համարում հիշել հետևյալը.

80-ական թվականներին Շվեյցարիայի ժրնե քաղաքում հրատարակվում էր (1883 թվից սկսած) Պյոտր Լավրովի և Լեփ Տիխոմիրովի խմբագրությամբ «Նարոդոպոլյան» կուսակցության օրգան «Вестник народной воли» գիտական—հեղափոխական հանդեսը: Հայտնի է, Վոր խմբագիրներից Լ. Տիխոմիրովը դավաճանեց իր կուսակցության և հեղափոխական գործին և անցավ ցարական ինքնակալության բանակը (1888 թվին): Մինչև այդ՝ Տիխոմիրովը հրատարակեց 1886 կամ 1887 թվին իր ֆրանսերեն մի աշխատությունը «La Russie politique et sociale»*) վերնագրով: Վորքան յեւ կարողանում եմ հիշել, հայոց դպրոցների փակման վերաբերյալ հայ անդամների հեղափոխական խմբակի հրատարակած հիշյալ անկեղալ թուղցիկը կամ նրա մասին հիշատակությունը կա Տիխոմիրովի այդ ֆրանսերեն աշխատության մեջ:

Այս միջանկյալ պատմական փաստը հիշելուց հետո քննենք այժմ համառոտակի թե ինչ և իրենից ներկայացնում թուղցիկը, պարզաբանենք նրա գաղափարական բովանդակությունը:

1. Թուղցիկը անստորագիր է. կոնսպիրացյայի նկատառումով խմբակը չե գրել իր ստորագրությունը, չկամենալով նման մի խմբակի գոյությունը հայտնի դարձնել կառավարության և գաղտնի փոտիկանության.

2. Թուղցիկը ուղղված է «հայ յեղբայրներին և հայ քոյրերին». այդպիսով խմբակը գիտում և անխափր բոլոր դասակարգերին, զլիաժորապես ժողովրդի այն տարրերին, վորոնք շահագրգռված են հա-

*) «Քաղաքական և սոցյալական միտադաստներ»:

յոց դպրոցների գոյութեամբ, վորոնց սրտին մտաւ եւ ժողովրդական գործը. հետեապէս նա ի նկատի եւ ունեցել տալիզապէս հայ գեմտկրատեային, վորովհետեւ ինչպէս թոուցիկի հեղինակները գրում են— «թեթեամիտ տղաները, զեզի ամեն սուրբ բան անտարբեր վերաբերվող հաստատիւր բուրժուաները, մեր պճնասեր տիկիներն ու սրիւրդները, վերջապէս հոգով եւ մարմնով ապականված՝ իրեն ինտելիգենցիա անվանող դասը իհարկեւ թեթեւ ուշքով են նայում այդ անորեն կերպով-կատարվող իրողութեան վրա»:

3) Թոուցիկի մեջ կարդում ենք. «մեր փառափոր անցյալից մեզ մնացել էր յերկու սրբութեան՝ ազգային յեկեղեցին եւ ազգային դպրոցները... մեր ազգային դպրոցից եւ ազգային յեկեղեցուց դուրս չկա փրկութեան մեզ համար» եւ այլն: Սա կղերականի լեզու եւ բացի այդ՝ թոուցիկի մեջ կարելի եւ հանգիպել այնպիսի խոսքեր, այնպիսի դարձվածքներ, վորոնք ռադիկալ, հեղափոխական խմբի մարի արդշունը չեն կարող լինել: Այն ժամանակ այդպիսի հայացքներ տիրող եին գլխավորապէս հայ հասարակութեան պահպանողական-կղերական տարրերի մեջ: Բայց կարելի եւ ասել, վոր նույն այդ հայացքները, ի բաց առջալ լիբերալ, առաջադիմական, ռադիկալ տարրերի, ընդհանրանապէս հայ հասարակութեան կղերական մտայնութեան, տիրացուական հոգեբանութեան արտահայտութեանն էր, հասարակութեան, վոր զարերի ընթացքում դատարարակվել, սնվել էր հոգեւորական դասի, աշխարհական եւ հոգեւորական կղերական տարրերի հետադեմ, խափարամիտ սեմիամի, միջնադարեան յեկեղեցական—օխոլաստիկական իշխանութեան ներքո:

Մենք կարող ենք ասել, վոր թոուցիկի հեղինակ խումբակի եւ վոչ մի անգամբ, չուներ եւ չէր կարող դաժանել այդպիսի սեակցեան մտքեր, թեեւ այն ժամանակիս կղերական միջնադարի բացիւնների վորոշ չափով ներգործութեան հնարավորութեանը խմբի այս կամ անգամի վրա բու-

ցարձակապես բացասել կարելի չեւ Յեթե նույն իսկ այդ բանը չլինէր, հեղափոխական խմբակը այլ լեզվով քան հասարակութեան մատչելի, հասկանալի լեզուն եր, հանդես գալ չեր կարող մի հարցի առիթով, վոր բնդհանուր ժողովրդական իրավունքի պաշտպանութեան հարց եր և վորի բռնաբարումը մի բարբարոս կառավարութեան կողմից ամեն մեկի սիրտն եր ճմուռւմ Վերջապես պետք ե ստել, վոր թռուցիկը Քր. Միքայելյանի գրչի արդյունքն ե, նա եր գրել և վեջնականապես խմբագրվելիս յենթարկվել ե փոփոխությունների խմբի աջակողմյան անդամների (Գ. Միրզոյան, Խ. Մալումյան) ազդեցութեան տակ:

Այսպիսով խմբակը գեպքի լրջությունը հասկանալի դարձնելու համար հաշվի ե տոնում հասարակական խավերի գիտակցութեան մակարդակը, համակերպվում ե, հաշտվում նրանց հասկացողությունների և զգացմունքների հետ և ըստ այնմ հանդես ե գալիս իր թռուցիկով ազդելու նրանց վրա, նրանց սթափեցնելու, շարժելու գիտավորութեամբ: Խմբակի այդ տակտիկան, կարծում ենք, առարկություններ առաջ բերել չե կարող հեղափոխականորեն մտածող անհատների և տարրերի շրջաններում:

4. Խումբը շատ լավ ե գիտակցել ցարերի բռնակալ կառավարութեան քաղաքականությունը հպատակ փոքր ազդությունների վերաբերմամբ. նա հիշում ե վրացիներին, լեհացիներին, մալաուսներին, վորոնց վերաբերմամբ նրանց իրավունքները բռնաբարելու, նրանց ինքնուրույնությունը փոշնչացնելու նույն քաղաքականությունն եր կերպուռւմ ցարի կառավարությունը, ինչ վոր հայ ժողովրդի վեժարեմամբ:

5. Խումբը շատ լավ գիտակցում եր, վոր ինչպես հայ ժողովուրդը և հպատակ մյուս ժողովուրդները, այնպես ել «հարյուր միլիոն ժողովուրդը տնքում ե բռնակալի լծի տակ». նրան լավ հայտնի ե, վոր այդ «հարյուր միլիոնից բաղկացած ժողովուրդը այսօր թե վաղը կարող

և ազատվել այդ լծից և իհարկե այդ ազատութիւնը ձեռք բերելու համար նա գործում է, միջոցների և դիմում: Հասկանալի է, վոր խումբը այստեղ վորոշակի ակնարկ է անում այն հեղափոխական գործող ույթերի մասին, վորոնք քաղաքական կռիւ էին մղում ցարական բռնակալ ռեժիմի դեմ, նրանց հեղափոխական գործունեութեան մասին, վորին նա ուշի ուշով, վորքան այդ հնարավոր էր այն ժամանակ, հեռուում էր: «Վերջապէս այդ բաղմամբիւ ժողովուրդը, կարգում ենք թուցիկում, ճնշված և ավելի անտեսական կողմից և պահպանելով յուր լեզուն, պահպանում է և յուր միութիւնը, յուր ամբողջութիւնը»: Այս նախադասութիւնը յետ դիտութեամբ վերաբաղեցի, վորովհետեւ խումբը նրանում արտայտած կարծիքով համերաշխւում է, կարծես թէ, նարոգնիկական այն խմբակցութեան հետ, վորը 70-ական թվականներին գրեթէ անտարբեր, անփույթ վերաբերմունք էր ցույց տալիս դեպի քաղաքական ռեժիմը, նրա դեմ քաղաքական պայքար մղելու անհրաժեշտութիւնը և միայն անտեսական ազատագրութեան հարցն էր նրան կլանել, կարծես թէ ցարիզմի բռնկալական քաղաքական ռեժիմի անսասանութեան պայմաններում կարելի էր ժողովուրդը անտեսապէս ազատագրել: Սա մի խոշոր սխալ էր, վոր իր ժամանակին հասկացով «Նարոգովոյան» կուսակցութիւնը, վորը հանդես գալով 70-ական թվականների վերջերը քաղաքական ազատութեան դրոշակի տակ՝ քաղաքական պատերազմ հայտարարեց ցարիզմի դեմ բացարձակ անբոլորիտական մեթոդներով,

Այդ սխալ հայեցակետով չէ բացատրվում արդյոք խմբակի անվճռականութիւնը, զուրկ լինելը հեղափոխական խիզախութիւնից, քաղաքական կռիւ մղելու անհրաժեշտութիւնը ըմբռնելու կարողութիւնից. դժվար է այդ բանը հաստատապէս պնդել, վորովհետեւ թուցիկի այլ տեղում դրա հակառակ այլ միտքն է արտահայտվում:

կարող եմ աշխատանք հաստատել, փոր խուճրը գիտակցում եր լավ քաղաքական կուլի անհրաժեշտութիւնը ցարական կառավարութեան դեմ, բայց, ինչպես վերև արդեն մատնանշեցի, նրան պակասումէին այնպիսի պայմաններ—սուբյեկտիվ և օբյեկտիվ—սուանց փորոնց քաղաքական—հեղափոխական գործունեութիւնը դատապարտված և լինում ամուլութեան:

6. Թուցիկը գրված և խիստ վոճով. նրա մեջ ցարի կառավարութեան հասցեին ուղղված են այսպիսի խոսքեր. «սարսափելի ավազակութիւն, հանդուգն բաշխող-գողութիւն, խայտառակ բռնաբարութիւն». «ուսաց միտպետութիւնը իրեն հատուկ բռնակալութեամբ փակում և մեր դպրոցները». «հայտնվում և մի բռնակալ». «ուսաց բռնակալները». «բռնակալ Ալեքսանդր երրորդը քարութանդե անում հայոց դպրոցները». «ուսաց բռնակալների քաղաքականութիւնը վաղուց հայտնի և ամենքին». «անամոթ զահլճ». «բռնակալների ձեռքի տակ գործող ստոր սողուններ, փոքրոգիներ». «գետապանների խորհրդածուները» և այլն և այլն:

Այսպիսի լեզվով կարող եին գրել մշայն հեղափոխականները: Հեղափոխական լինելը մշանգամայն արդեն հաստատում և նրանց գոյժադրած լեզուն, տերմինալոգիան:

7. «Միթե այժմ ել չեն բացվելու ձեր աչքերը, միթե այժմ ել մենք չպետքե հասկանանք ուսաց բռնակալների բռնած ընթացքը հայերի վերաբերմամբ», գրում են Թուցիկում: Սա մի կոչ և, մի հրավեր, փորով խմբակը դիմում և հայ ժողովրդին իր բռնաբարված իրավունքների պաշտպանութեան համար ցուցադրել իր կոլլեկտիվ կամքը, կոլի հայտարարել, դիմադրել ցարի կառավարութեան. սա պարզապես քաղաքական կուլի հրավեր և նշանակում: Բայց ինչպես: «Տաճիկ բռնակալը հափշտակում և մեր սեփականութիւնը, մենք աղաղակում, դռում,

բողոքում եինք անիրավութեան դեմ, բայց ուստի բաշխ-
բուզուկը քանդում է մեր սրբավայրերը—դպրոցները,
պատերազմ է հայանում մեր լեզվին և մենք գլուխներս
խոնարհեցրած ախ ու վախ ենք քաշում մշտն։ Մեր լե-
զուն հանում են արմատից և մենք փոխանակ մեր
բռունցքը ցույց տալու մեր վիզերն ել դնում ենք
անամոթ դանձի կացնի տակ»։ Հրաշալի է, ավելի լավ
կարելի չէր արտահայտվել։ «Բռունցքը ցույց տալը» հե-
ղափոխական ակտ է, վորով կոչ է անում խմբակը դի-
մադրել բռնակալներին և վորին նա ջեթմ կողմնակից է.
սրանով արդեն մի անգամ ևս ասպնդուցվում է խմբակի
հեղափոխական տրամադրությունը, նրա հեղափո-
խական լինելը։

8. Սակայն խմբակը գիտակցում է այն վողբերգա-
կան վիճակը, վորի մեջ նա գտնվում էր. իր անգորու-
թյունը, անկարողությունը, ժողովրդի անճարությունը.
ուստի նրան մնում էր առաջարկել մշտն մի միջոց. «յե-
թե այսօր մենք, հայերս, անկարող ենք դիմադրել խա-
բերայ բռնակալներին, դո՛նե մենք կարող ենք մա-
հի վճիռ կարգույ այդ բռնակալ ձեռքի տակ
գործող այն ստոր սողուններին^{*)}», վորոնք մեր
լեզուն և նորա հետ նաև մեր ազգությունը
մահու էն տապաւարտել»։ Այստեղից արդեն պարզ է,
վոր խմբակը կանգնած է տերրորիստական տեսա-
կետի վրա. նա տերրորիստ էր, ինչպես տերրորիստ-
ներ եին այն ժամանակվա ուստի հեղափոխական խմբերը.
այդ պատճառով նա առաջարկում է տերրորի յենթար-
կելով վոշնչացնել ցարի բռնակալ կառավարություն «ստոր
սողուններին»։ Առաջարկելով տերրոր՝ խմբակը ինքը ան-

^{*)} «Դոճուկապներ», «Նանովակներ», «Դեյանովներ», «Տոլստոյներ»,
վորոնց անունները հիշված են թուացիկի մեջ, Դոճուկով-Վորտակովը յերկրի
կառավարչապետն էր այն ժամանակ, Յանովսկին—Գովկասի գաղութների հե-
ղաբարձու, Դեյանովը—մողովրդական լուսավորությունից մեկտար, իսկ Տոլստոյն
—ներքին գործոց մեկտար։

հաստապետ չէ կամ ե՞ն ում աշղպիսի ակտերին դիմել. նա հասկանում եր իր թուլութիւնը, թերեւ յերկյուղ եր կրում, վոր իր կողմից կատարված նման մի ակտ կարող եր այն ժամանակվա պայմաններում, աղետաբեր լինել ժողովրդին. աշղպիսի ծանր մի պատառխանատութիւն իրեն վրա վերցնել չեր ցանկանում նա, ուստի կռվի աշղ միջոցն առաջարկվում է ընդհանուրի ուշադրութեան, վորպէս զի ժողովրդի միջից պատրաստված, կազմակերպված տերրորիստական խմբեր հանդէս դան նման ակտեր կատարելու Բայց սա, իհարկէ, ուսուպիտ եր. այն ժամանակ մեր ժողովրդի կացութիւնը այնպէս եր, վոր հուշս գնել թէ նրա միջից կարող եին դուրս գալ տերրորիստական խմբեր, կարելի չեր. հենց ինքր տերրորիստ խումբ եր. նա կարող եր կառավարութեան այս կամ սողունին տերրորի յենթարկել. բայց աշղ չարեց, ապացուցանելով մշայն իր հեղափոխական անճարակութիւնը:

Գ. Թուուցիկի վերջին կեսը կարող է իրեն վրա դարձնել ընթերցողի ուշադրութիւնը. «ինչ վերաբերում է հայ լեզվի տարածելուն, ասված է այնտեղ, թող անիծվի աշտուհեան այն հայր, վոր հանդիպելով մի այլ հայի, խոսի այլ լեզվով բացի հայերէնից»: Այստեղից, անկասկած, շովինիզմի հոտ է փչում: Այդ բանը հասկանալի է հոգեբանական այնպիսի մի դրութեան մեջ, ինչպիսին ստեղծում է սովորաբար սեական: Շատ քչերն են, վոր ազատ են մնում սեականայի ազդեցութիւններից. նրանք սովորաբար արտակարգ հատկութիւններով ուստված մարդիկ են լինում: Խմբակին, կարելի չէ, աշղ քչերի շարքը դասել: Այնուամենայնիվ ժամանակի համարձակ քայլեր անելու ձգտում ունենալ, հեղափոխական մտքի մշակ ջերմ կողմնակիցը հանդիսանալ—դա շատ նշանակալից մի իրողութիւն է, վորը գնահատելի կարող է լինել մշայն նրանց բոլորի կողմից, վորոնք տարրական

հասկացողութեան ունեն հեղափոխական մտքի և գործի զարգացման ուղիների մասին, զիտակցում են թե ինչ և հեղափոխականութեանը, հեղափոխական գրութեանը, հաշվի են առնում տեղը, պայմանները, ժամանակը, յերր նա ծնունդ և աճում, զարգանում, աճում և և վերջապես պոռթկում:

Խմբակի մյուս պահանջները թե «հայ ընտանիքում տիրապետողը պիտի լինի մայրենի լեզուն», «մայրը յուր կաթի հետ պետք և մուգանե զավակին և յուր մայրենի բարբառը—հայերեն լեզուն» բնական և հասկանալի են առավելապես հայերի համար, վորոնք տաճնյակ տարիների ընթացքում 80-ական թվականներից առաջ և թե հետո, մոռացութեան տված, ավելին կասենք, արհամար հանքին մասնաձ իրենց մայրենի լեզուն՝ իրենց ընտանիքներում գործածական եին դարձրել բացառապես ոտար լեզուները—ռուսերեն, ֆրանսերեն և այլն^{*)})

Դա մի տեսակ մոզա եր, զգվելի մոզա, ինչպես մի ժամանակ կանացի տուրնյուրը կամ ալսորվա կանանց պոռոններ ներկելը կամ կանացի թաթերը լակեյորեն պաշպէլը a la Don-juan:

«Յուրաքանչյուր հայ ընտանիք թող ներկայացնե իրենից առանձին հայ դպրոց»: Ահա մի գեղեցիկ միտք, մի որինական պահանջ, վոր խմբակը գնում եր այն ժամանակ հայ ընտանիքի վրա վորպես ցարական բռնի քաղաքականութեան հակազդող լավագույն միջոցներից մեկը:

Վերջում խմբակը գրում և. «Այսուհետե մեր մշակ հուշար թող մենք ինքներս լինենք, այսուհետե ել ուրիշի մանավանդ ուստաց կառավարութեան վրա վստահ չլինենք» և այլն:

Այդպիսով ժողովուրդը վոչ թե ուրիշների վրա հուշս գնելով, այլ ինքնազարգացման, ինքնագործութեան,

^{*)} Խոսքը զլիտվորապես բուրժուական-ինտելիգենտական տարրերին և վերաբերում:

իր սեփական ներքին ուշիերի զարգացնելու ճանապարհով մյայն կարող եր ազատագրվել: Ո՛ր, այդ «ուրիշներ» սուկալի բառն է, վոր մենք հանդիպում յենք դեռ 1885 թվի սկզբում հրատարակված թռուցիկի մեջ... «Ուրիշները» վրա հույս դնելով մեր տունը քանդվեց, մենք միշտ մեր հայացքները դարձրինք «ուրիշների» պնտության և միջամտության մեր ներքին գործերի մեջ, առանց մեր կողմից լուրջ ջանքեր գործ դնելու մեր ժողովրդի ինքնուրույնությունը զարգացնելու, նրա հասարակական—քաղաքական միտքը հեղափոխականացնելու, ժողովրդի «ազատագրական գործը իրեն սեփական գործը» դարձնելու ուղղությամբ: Սա յեղավ մեր կյանքի ամենաաղետարեք հանդամանքը, մեր դժբախտության, մեր հետամնացության զլիսավորագույն պատճառը: Այդ «ուրիշները» վրա հույս չդնելու պատգամը հենց իրենք խմբակի անդամները (Գր. Միքայելյան, Սաշ. Մալումյան) շատ շուտ մոռացան, տասնյակ տարիների բնթացքում նրանք, վորոնք «Գաշնակցության» հիմնադիր և ղեկավար հանդիսացան, «ուրիշները» վրա հույս դնելով ժողովուրդը «ազատագրել» կամեցան. հույս դնելով յեվրոպական պետությունների վրա (Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և այլն), նրանց գթությունը հայցելով մեր ազգային «փրկիչները» լավ «փրկեցին» հայ ժողովուրդը: «Փրկիչները» այդ քաղաքականությունը տեսանք թե ինչպիսի աղետարեք հետևանքներ ունեցավ մեր ժողովուրդի համար. մի ամբողջ ժողովուրդ մորթնումեց, հոշոտվեց 1915 թվին—անա այն անուր վոճիրը, վորը մեր քաղաքական կուրության պատճառով, մեր պրովոկացիոն գործելակերպով առիթներ տվեցինք տաճկական բարբարոսության գործելու...

Վոչ վոր կարող չե մոռանալ այդ. մոռանալ—նշանակում է արդարացնել մի միլիոն ժողովուրդի բնաջնջումը...

ՎԵՐՋԻՆ ԽՈՍԸ

Այն բոլորից, ինչ վոր ասվեց խմբակի մասին, ինչ յեզրակացության կարելի և հանդել: Անցյալ դարու 80-ական թվականների առաջին կեսում (1882-3 թ. թ.)— 45 տարի առաջ— Թիֆլիսում կազմվում և մի խմբակ, վորը իր արամադրություններով, իր հակումներով հեղափոխական-տերրորիստական էր, իր գաղափարներով և գործելակերպով ձգտում էր նմանվելու այն ժամանակ գործող ողջ նարոդնիկական հասանքներին, բայց վոր այդ նրան չհաջողվեց և չեր կարող լիովին հաջողվել այն ժամանակվա մեր հասարակական պայմաններում: Ժամանակակից կյանքը, (քաղաքական, սոցյալ-տնտեսական) բացի այն, վոր անհաղթելի արգելքներ էր հարուցանում գործը հաստատուն հիմքերի վրա դնելու ջանքերին, հարկադրում էր խմբակի անդամներին իրենց գործունեությունը համեմել, տալ նրան վորոշ գունավորում համապատասխան գոյություն ունեցող պայմաններին, ժողովրդի տրամադրություններին, հասկացողություններին: Խմբակի հեղափոխական գործունեության ասպարեզը շատ փահմանափակ էր. նա (խմբակը) անկազմակերպ էր, անփորձ, չունեւր անհրաժեշտ ոժանդակիչ ույժեր, գուրկ էր ժողովրդական լայն գանդվածների համակրությունից ու աջակցությունից: Սա վողրերդական այնպիսի մի դրություն էր, վորը սովորաբար առաջ և բերում խորին հիասթափություն հասարակական գործին ավելի կամ պակաս նվիրված մարդկանց մեջ: Խմբակը մյայն մի մասնուկ էր քաղաքական—հեղափոխական հասունության տեսակետից և իր մանկական քայլեր անելու փորձերն սկսեց փոշ շարունակաբար, այլ ընդմիջումներով: Նրա հեղափոխական գործունեությունը խոսքից զենք չանցավ—բանավոր էր (սրբապազանդ, անկեղալ ժողովներ և հավաքույթ-

ներ—ուսանողներից, արհեստավորներից, գյուղացիներից և այլն) և գրավոր (անլեզալ թուլացիկ, բրոշյուր)։ սա, իհարկե, հեղափոխական գործ եր, բայց իր հեղափոխական-տերրորիստական տրամադրության համաձայն նա անկարող չեղավ տերրորիստական մի վորեկ ակտ կատարել, մի քաղաքական ցույց կազմակերպել (հենց թեկուզ գրությունների փակման նշանավոր դեպքի առիթով), վորի արդարացումը պետք և գտնել այն սուբիեկտիվ և սբիեկտիվ պայմաններում, վորոնց մեջ ապրում եր խմբակը և վորոնց մասին վերե խոսք չեղավ։

Յերբ քննության յենք յենթարկում մի կազմակերպության, հատարական մի խմբակցության դործունեությունը, նրա թերի, պակասավոր կամ գրական կողմերը, մենք միշտ անհրաժեշտարար ի նկատի պետք և առնենք ժամանակը, տեղը, պայմանները, հանգամանքները, վորոնց մեջ գործող անձինք տպրել և գործել են։ Առանց այդ պատմական գիտական մեթոդի՝ մեր պատմական հետազոտությունը կլիներ վոչ գիտական, անհիմն, դատարկ։ Դժբախտարար, անցյալի մասին զրոյներից և պատմաբաններից շատերը անտես են առել այդ անհրաժեշտությունը։ Նրանք քննադատել են, դատողություններ են տվել անցյալում գործող անհատների, խմբակցությունների դործունեության, կատարած քայլերի, վարքագծի մասին իրենց հասկացողություններով, իրենց ժամանակակից կյանքի պահանջների մոտեցումով, իրենց չափանիշով։ Չափել անցյալում տեղի ունեցած յերևութիւնները, դեպքերը անցյալին բոլորովին տարբեր ներկայի չափանիշով—նշանակում և վոչինչ չհասկանալ, իզուր ջուր ծեծել։

Հենց այդ պատճառով ել պետք և ամբողջապես թափանցել 70-ական, 80-ական թվականների կյանքի խորքերը, այն ժամանակվա պայմանների հետազոտության մեթոդով մեռննալով խմբակին՝ հասկանալ նրան և

բոտ այնմ տալ նրան համապատասխան գնահատականը։
 Պետք է շատենք, վոր, այո՛, նա փոքր էր, թույլ և անճարակ
 էր. բայց նա իր թուլութեամբ և անճարակութեամբ մի վորեն
 բաներ, հեղափոխական էր, ռադիկալ էր, հասարակութեան
 խիղճն ու միտքն արթնացնողն էր իր համեստ ու ժերի
 համեմատ, վորով իր ժամանակին շատ ավելի բարձր էր
 կանգնած քան միւս հասարակական եմբերի ներկայա-
 ցուցիչները։ Ամենայն իրաւամբ պետք է համարել նա-
 րողնիկական թեքումով այդ խմբակը վորպէս հայ
 անդրանիկ հեղափոխական խմբակ Անդր-
 կոկասում, վորը սկիզբը դրեց հեղափոխական մեթոդնե-
 րով գործունեութեան և որինակը հանդիսացավ հետագա-
 յում մեր կյանքի մեջ ծնունդ առած հեղափոխական խմ-
 բերի և կազմակերպութեանների համար։ Հայ անդրանիկ
 հեղափոխական այդ խմբակն էր, վոր իր գործունեութեան
 ուղին շատ ճիշտ նշանեց. նրան ավեց մեր կյանքում
 կիրառելու հեղափոխական-քաղաքական ուղղութեան ցա-
 րի կառավարութեան գեմ պայքար մղելու նպատակներով։
 Սա և ամենաուշադրով հանգամանքը, վորը գնահատելի է
 դարձնում նրան մեր յերկրի սոցյալիստական, հեղափո-
 խական գործող անհատների և կուսակցութեանների
 աշըում։

ՀԱՎԵԼՎԱԾ

Առաջ յենք բերում աշտուղ խմբի անդամ Սան-դալի աշխատություններին մի քանի քաղվածքներ վերադաս նմուշ.

«Ահա վերջապես հասա նպատակիս — գյուղումն եմ, գրում ե նա իր «Փոքր աստղ» վեպի ներդաստուցիչ Սադաթիլի որագրում: Մանուկ ժամանակս կարծում եի, վոր Աստծուն շատ սիրելի եմ, վորովհետեւ ամեն ցանկությունս վաղ թե ուշ անշուշտ իրագործվում եր: Շատ ժամանակից ի վեր յերազում եի գյուղն ընկնել. ահա այս ել հաջողեց, վորքան ուրախ եմ (եջ 93)»... «Զե, պիտի գյուղացուց սովորել ե սովորածը մշակել, հարստացնել: Թե չե իմ աշխուրհնոփս ի՞նչ եմ անելու: Ի՞նչքան դործ կարելի ե անել, Տեր-Աստված. սիրտս վառվում ե, նորանոր զգացմունքներ կուտակվում ե ալեկոծվում են. մանգալս թռչել ե, խոտակցությունս վողեշունշ բանաստեղծություն. վախում եմ խեղճ կորցնել»... «Ժամանակիս մեծ մասը կանցկացնեմ գյուղացու մոտ՝ դաշտում, կալում, անտառում ե վերջապես այն ամեն տեղերում, ուր նրան կրկանչի իր գործը: Կը նայեմ, կըլսեմ, կըհարցնեմ ե վո՛րքան պաշար մտածելու ե սովորելու... Իսկ մնացած ժամանակս գործ կդնեմ գյուղատնտեսական գրադարան կազմելու ե պահելու միջոցներ ձեռք բերելու վրա. Հայոց գրականությունը այդ բանում չի կարող ինձ ոգնել. պետք ե թարգմանել առ ալժամ հողի պարարտման մասին, անասնապահության մասին: Դեղատուներ ավելի շուտ պիտի հաջողեցնել քան թե գրատուներ»... «Գրիգոր ե Մարգար ուսանողների ոգնությամբ բժշկությունից իմ ուսումնասիրածն աշտուղ ապարդյուն չի լինի: Տնային բժշկարան ե տնային դեղատուներ լիովին ուսումնասիրած լինելով, կարծեմ, թեթե հիմանդությունների գեմ կարող

եմ համարձակ մաքառել, իսկ ծաղկի պատվաստումը՝ մեծ հաջողությամբ»...

«Ծիծաղելի է մի քիչ. որհնվածները անասունների առողջապահությանը ավելի յեն հոգում քան թե իրենցը: Յես ել այդտեղից կսկսեմ իմ ձմեռվա դասախոսությունները՝ թե խրճիթներում և թե աշակերտներիս»... «Գյուղացիք դնում են մոտակա մալականի գյուղը բաղանիքի մեջ լողանալու. Իսկ յեթե յես շինեմ բաղանիք հենց իրենց գյուղի մեջ... դրա արդյունքն իրենց գրադարանի վրա և ծախավելու: Փայտը շատ. մի սենյակ, մի մեծ կաթնա և մեկ ել մշակ, վոր շաբաթվա մեջ հայտնի որերը ջուրը տաքացնի և լողացողներից վարձը ստանա» (եջ 94, 95, 96):

Այսպիսով վեպը ցուցադրում է գյուղում գործող ուսուցչի լեզալ նարոդնիկական գործունեությունը, վորի ժամանակ նա ամբողջապես պաշտպանելով հարստահարվածների, շահագործվածների շահերը, ընդհարվում է շարունակ գյուղի ցեղերի, բոլունցքների, վաշխառուների հետ, սաստիկ պայքար մղում նրանց դեմ:

Սանդալի մյուս «Վիշապ» պատմվածքի մեջ կարդում ենք ի միջի այլոց հետևյալը. «Այն մարդը, վոր ինքն առանց աշխատելու ուրիշի աշխատանքով է ապրում կամ կիտում հարստություն, կամ յեթե աշխատում ի վնաս ուրիշին և գործում, այդպիսի մարդը անվանվում է գող, ավաղակ, դատարկապորտ կենդանի, ուրեմն և անբարոյական» (եջ 73):

Կապալառուների մասին նա գրում է. «Ի՞նչ են դրանք, անկասկած ուրիշի աշխատանքով ապրողներ»... «Կապալառուները վերջացնում են գործը (խոսքը շինության կապալի մասին է. Գ. Ղ.) շաբաթը մեկ անդամ բանվորներին աչքի տակ անցնելով և հարյուրավոր ծալած ուրվիները դրանք դնելով: Բայց ի՞նչ և ստանում նույն

ինքն գործը, տունը ավարտողը, կալատողը, հյուանը, մշակը, այնքան, վոր կարողանա գնել մի կտոր շոր հաց, խոնավ և մութ սենյակ վարձել և վոր պատրաստ լինի գործ չեղած կամ հիվանդ ժամանակը Աբրահամի գոգը գնալ» (եջ 74, 75)։

Հեղինակը այն միտքն է պաշտպանում, վոր անհատական կապալը պետք է վերացվի և նրան փոխարինե հավաքական կապալը. այդ կապալը վերցնում են իրանք արհեստավոր-բանվորները. ուրեմն մի տեսակ կապալային կոոպերացիա. «կապալը պետք է վերցնի վոչ թե մեկը, վոր աշխատանքը կամ փաստը դա մյայն ստանա, այլ միտին, վոր աշխատանքը և փաստը բոլորի վրա բաժանվի»... «արհեստավորները պետք է ընկերությամբ վերցնեն, ապա թե վոչ մեկը վերցնելով կապալը նա աշխատում է բանվորի վարձը վորքան կարելի է պակասեցնել և յեթե ոգուտ կա միայն ինքը վերցնել» (եջ 76)։

Այս և այլ այսպիսի մտքեր ցիրուցան կարելի է գտնել Սանդալի հիշյալ վեպերի մեջ և նրա մի քանի հոդվածներում, վորոնք լույս են տեսել հայ պարբերական թերթերում. հրաշալի է մանավանդ Թիֆլիսի բարբառով նրա «Հոգեսեր գայլերը» պատկերը Արծրունյան «Մշակ»-ում (№ 59, 1892 թ.)։

Մենք այժմ կոմմունտարյանների մեջ չենք մտնում. Սանդալի աշխատությունների գաղափարական յեությունը մենք քննադատական վերլուծման կյենթարկենք նրան նվիրած մի առանձին աշխատության մեջ։

Գ. Գ. Գ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ցեքեա
Հատաճարան	3
I. Մաքերի բաղխումքն հայերի մեջ անցյալ դարու 70, 80-ական թ. թ.	7
II. Հայ անդրանիկ հեղափոխական խմբակի ծագումը, ուղ- ղությունը և դորժունեությունը:	20
III. Խմբի կազմը, սոցյալական ծագումը. նրա գոյության- և դորժունեության անկայունության պատճառները. կենսագրական նոթեր.	38
IV. 1884—5 թ. թ. հայոց դպրոցների փակման առիթով հրատարակած թուղթիկի պատճենը. ժանդարմական ար- ձանագրությունը թուղթիկի մասին. կոմմենտարյաներ	49
V. Վերջին խոսք	65
Հավելված	68

ԱՌԱՆՁԻՆ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿԵԴՐՆԱԿԻ ԿԵՏԵՎՃԱԼ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. «Բանվորների ապահովագրությունը Արևմտյան Յեկ-
րոպայում և Ռուսաստանում» . Թիֆլիս, 1894 թ.
2. «Փուշ զավակ» դրամա 5 գործ. » 1905 թ.
3. «Рабочее движение и социал-демокра-

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տող	Սխալ	Ուղիղ
15	6	գինարարանու թյուններ	գինարանու թյուններ
23	2	նաբողնիական	նաբողնիական
23	4	խմբակը	խմբակը
24	16	սիակցիան	սիակցիան
29	36	լեռնույթ	լեռնույթ
33	4	զարնում	զարկում
36	32	նկարագրում և	նկարագրում և
36	33	այն աեզ	այն աեզ
45	9	այս	այս
46	23	պաշտոնավորել	պաշտոնավորել
47	8	մարդկային	մարդկային
48	15	անձակվում և	արձակվում և
48	31	զայգոցների	զայգոցների
53	7	հեղափոխական	հեղափոխութւթյան
58	27	կերատում	կերատում
58	28	գեգորեղմամբ	գեգորեղմամբ
58	31	հարյուր միլիոն	հարյուր միլիոն ուսւ
60	21	մյանգամայն	միանգամայն
61	23	տապալարակ	դատապարակ
67	4	բաներ	բան եր
69	11	կաթոս	կաթոս

Անգրկովկասում» Թիֆլիս, 1926 թ.

Շուտով լույս կտանի ռուսերեն «Заккнига»-ի հրա-
տարակությամբ հեղինակի «Мировая война и социа-
лизм» գիրքը թարգմանություն ֆրանսերենից:

**ԱՌԱՆՁԻՆ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԳԵՂԻՆԱԿԻ ԳԵՏԵՎՏԱԼ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**

1. «Բանվորների ապահովագրությունը Արևմտյան Յեվ-
րոպայում և Ռուսաստանում» . Թիֆլիս, 1894 թ.
 2. «Փուչ զավակ» գրամա 5 գործ. » 1905 թ.
 3. «Рабочее движение и социал-демократия на Кавказе» с предисл. Г. В. Плеханова
I издание Женева, 1910 г.
II издание (госизд.)
Москва, 1923 г.
 4. La guerre actuelle et le socialisme»
Լա Շո-դը—ֆոն (Շվեյցարյա) 1915 թ.
 5. «Անցյալի հիշողություններից» . Թիֆլիս, 1918 թ.
 6. «Անդրկովկասի քաղաքական կյանքը
1918 թվին» » 1919
 7. «Записки Революционера» № 1 непериод.
издание Тифлис, 1920 г.
 8. «Материалы по истории отпадения За-
кавказья от России». издание «Красн.
Кн.» Тифлис 1923 г.
 9. «Բայց և այնպես նա շարժվում և» (E pur si
muove...) գրամա 4 գործ. Սիրիերի քաղա-
քական արտոբյուրների կյանքից . Թիֆլիս, 1925 թ.
 10. «Արևմտ Սովետական Ռուսաստանում»,
տրագիկոմեդյա 2 գործ. 5 պատկ. Թիֆլիս, 1926 թ.
 11. «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը
Անդրկովկասում» Թիֆլիս, 1926 թ.
- Շուտով լույս կտանի ուսանելն «Заккнига»-ի հրա-
տարակությամբ հեղինակի «Мировая война и социа-
лизм» գիրքը Թարգմանություն ֆրանսերենից:

ԳԻՆԵ 60 Կ.

[10]

A $\frac{11}{80201}$



«ԱՄԵՐԱՆԻ ԱՆՈՒՄԱՐԱՆ»

Հրատարակչության պաշտոնը — Թիֆլիս, Ռուստավելու
սրահում № 24

Բաժանմունք — Յերեան Արտյան փող. № 17